

Հրատարակված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Մոսկվայի գրասենյակի  
ֆինանսական աջակցությամբ

Published with the financial support of the UNESCO Moscow Office

**ԱՎԱՆԴԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԵՎ ԱՐՀԵՍՏԻ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ  
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ  
ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ԵՎ ՍԵՄԻՆԱՐԻ ՆՅՈՒԹԵՐ**

**TRADITIONAL ARTS AND CRAFTS EDUCATION IN  
ARMENIA  
CONFERENCE AND WORKSHOP MATERIALS**

Երևան, 11 հուլիսի 2007թ  
Yerevan, July 11, 2007

Այս աշխատանքում արտահայտված տեսակետները և մտքերը պատկանում  
են հեղինակներին և դրանք պարտադիր չէ, որ արտահայտեն  
ՅՈՒՆԵՍԿՕ-ի տեսակետը:

The authors are responsible for the choice and the presentation of the facts  
contained in this book and for the opinions expressed therein, which are not  
necessarily those of UNESCO and do not commit the Organization.

## Բովանդակություն

Երկու խոսք-----  
Համաժողովի ծրագիր-----

### **Բազման խոսք**

Համբարձում Մինասյան-----  
ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործերով Հայաստանի ազգային հանձնաժողովի  
Գլխավոր քարտուղար

### **Ողջույնի խոսք**

Արևիկ Սարիբեկյան-----  
Հայաստանում Բրիտանական խորհրդի տնօրեն  
Կարո Վարդանյան-----  
ՀՀ Մշակույթի նախարարության մշակութային քաղաքականության  
վարչության պետ  
Արսեն Սողոմոնյան-----  
ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերով նախարարության  
երիտասարդական քաղաքականության վարչության պետ

### **Ելույթներ**

Նարինե Սարգսյան-----  
«Ապագան քոնն է» ԲՄՀԿ-ի նախագահ  
Մարինա Հովհաննիսյան-----  
«Վորդ Վիժն» Հայաստան ՄԲԿ-ի  
Երեխաների պաշտպանության ծրագրերի ղեկավար  
Լալա Ղազարյան-----  
ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության  
Ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության պետ  
Արտակ Աղբալյան-----  
ՀՀ Կրթության և գիտության նախարարության  
Նախնական և միջին մասնագիտական կրթության վարչության պետ  
Նելլի Դուրյան-----  
ՀՀ Ոստիկանության քրեական հետախուզության  
գլխավոր վարչության բաժնի պետ,  
ոստիկանության գնդապետ  
Էլինար վարդանյան-----  
Հասարակական երկխոսության և զարգացումների կենտրոն  
Գործադիր տնօրեն  
Էլիզա Մինասյան-----  
«Ջինիշյան» հիշատակի հիմնադրամի տնօրեն  
Սեդա Բարսեղյան-----  
Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի

Երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ  
Հասմիկ Սկրտչյան-----  
ՀՊՄՀ դասախոս, մանկ.գիտ.թեկնածու,  
Երևանի «Հատուկ տիպի» մանկատան տնօրեն  
Վահագն Գրիգորյան-----  
«Վորդ Վիժն» Հայաստան ՄԲԿ-ի  
Տավուշի ՏՁԾ ղեկավար  
Ռամոնա Կտակյան-----  
ՀՕՖ-ի ԵԸԿԿ ծրագրերի ղեկավար  
Կարինե Հարությունյան -----  
«Ծիծեռնակ» ՀԿ-ի գործադիր տնօրեն

**Ամփոփիչ սեմինար**

Արմինե Պողոսյան-----  
Երևան քաղաքում ծրագրի համակարգող  
Թեհմինե Կարախանյան-----  
Արարատի մարզում ծրագրի համակարգող  
Քնարիկ Գևորգյան-----  
Կոտայքի մարզում ծրագրի համակարգող  
Հակոբ Մաթևոսյան-----  
Ծրագրի սոցիոլոգ

**Կարծիքներ և առաջարկություններ**

Իրինա Սաղոյան-----  
«Փրկեք երեխաներին» կազմակերպության  
հայաստանյան գրասենյակի տնօրեն  
Գեորգի Հախնազարյան-----  
Երևանի Հ. Դանիելյանի անվան արվեստի դպրոցի տնօրեն  
Արիս Կարապետյան-----  
Կոտայքի մարզի Աբովյան քաղաքի  
Գեղարվեստի դպրոցի տնօրեն  
Պարույր Սանթրոսյան-----  
ՀՀ ԿԳՆ Երևանի պետական  
ճարտարագիտական քոլեջի տնօրեն  
Դիանա Կարապետյան -----  
ՈՒԼունքագործության և բատիկի խմբակի փորձագետ  
Սուսաննա Թումանյան-----  
«Ասեղնագործություն և դիզայներական աշխատանքներ»  
խմբակի փորձագետ  
Կարինե Կարապետյան -----  
«Տիկնիկագործություն և փափուկ խաղալիքներ» խմբակի փորձագետ  
Ամալյա Սկրտչյան-----  
Կոտայքի մարզի «Խեցեգործության» խմբակին

մասնակից երեխայի ծնող  
Վարդուհի Միմոնյան -----  
ՌԻՆՈՒՄՔԱԳՐԹՈՒՅՅԱՆ և բատիկի խմբակին մասնակից երեխայի ծնող  
Ազնիվ Հակոբյան -----  
«ՌԻՆՈՒՄՔԱԳՐԹՈՒՅՅԱՆ և բատիկի» խմբակին  
մասնակից երեխայի ծնող  
Վալյա Հարությունյան -----  
«Տիկնիկագործություն և փափուկ խաղալիքներ»  
խմբակին մասնակից երեխայի ծնող  
Լուսինե Սեփիսանյան-----  
Ձեռքի աշխատանքների խմբակի  
մասնակից երեխայի ծնող  
Խոհարարության խմբակին մասնակից երեխաների ծնողներ-----  
Ռուզաննա Հակոբյան-----  
«Ասեղնագործություն և դիզայներական աշխատանքներ»  
խմբակին մասնակցած երեխա  
Հակոբ Մաթևոսյան-----  
Ծրագրի սոցիոլոգ  
Ամփոփիչ սեմինարի ընթացքում արված ռաջարկություններ-----

## Երկու խոսք

Ինչպես նշված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Կանոնադրության Հոդված I-ում, կազմակերպության հիմնական նպատակն է նպաստել խաղաղության ու անվտանգության ամրապնդմանը՝ կրթության, գիտության և մշակույթի բնագավառներում ազգերի համագործակցության միջոցով: Կազմակերպությունը հարգում է յուրաքանչյուր երկրի՝ իր ուրույն մշակութային և կրթական քաղաքականությունը վարելու իրավունքը և իր խնդիրը տեսնում է միայն դրան օժանդակելու մեջ: ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործելակերպը նպատակաուղղված է առկա խնդիրների լուծման համար խթանիչի դեր կատարելուն:

Կրթության ոլորտում ՅՈՒՆԵՍԿՕ-ն իրականացնում է մի շարք կերևորագույն առաջնային ծրագրեր, որոնց թվին են պատկանում ***Կրթություն բոլորի համար*** և ***Ներառական կրթություն*** ծրագրերը:

Կրթություն բոլորի համար ծրագրի իրականացումը նախաձեռնվել է 1990թ.-ին Ջոնֆիեմում (Թայլանդ) կայացած Կրթություն բոլորի համար համաշխարհային կոնֆերանսի ժամանակ, երբ 155 երկրների պատվիրակները, մտահոգված իրենց երկրներում կրթության վիճակով, և 170 կազմակերպությունների ներկայացուցիչները պայմանավորվեցին մինչև հազարամյակի վերջը համընդհանուր դարձնել տարրական կրթությունը և կրճատել անգրագիտությունը:

***Ներառական կրթությունը*** առաջընթաց մոտեցում է, որն ուղղված է բոլոր երեխաների, երիտասարդների և մեծահասակների կրթական կարիքների բավարարմանը՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով ուսումնական կյանքից օտարվելու և դուրս մնալու հանդեպ առավել խոցելի անձանց վրա:

Ահա այս երկու առաջնային ծրագրերի շրջանակներում էլ ՅՈՒՆԵՍԿՕ-ն ակտիվ գործունեություն է ծավալում, որոնց կարևորագույն բաղկացուցիչ մասը տարրը կարելի է համարել նաև կրթությունը արվեստի և արհեստի միջոցով:

### ***«Կրթություն արվեստի և արհեստի միջոցով»***

ՀՀ-ում ամեն տարի դպրոցն ավարտում են հազարավոր երեխաներ, որի մեծ մասը դպրոցն ավարտելուց հետո հայտնվում է փողոցում, չի կարողանում գտնել աշխատանք, չի կարողանում հոգալ իր հանապազօրյա հացի խնդիրը և շատ հաճախ դառնում է հանցագործ կամ ծանր բեռ հասարակության համար:

2007 թվականի հունիս-հուլիս ամիսներին Մոսկվայում ՅՈՒՆԵՍԿՕ-ի գրասենյակի հովանավորությամբ և ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործերով Հայաստանի ազգային հանձնաժողովի աջակցությամբ «Ապագան քոնն է» բարեգործական, սոցիալական հասարակական կազմակերպությունն իրականացրեց «Ավանդական կիրառական արվեստի, տարբեր

հմտությունների և կարողությունների ուսուցում» ծրագիրը, որի նպատակն էր սոցիալապես անապահով, հատուկ կարիքներով և թույլ մտավոր կարողություններով երեխաներին տալ գիտելիքներ և հմտություններ արհեստի և արվեստի տարբեր ոլորտներում, որը կօգնի նրանց ինքնուրույնության ձևավորմանը, մասնագիտական կողմնորոշմանը և հնարավորություն կտա օգտակար լինել, թե հասարակությանը, թե սեփական ընտանիքին:

Ծրագրի իրականացմանը միացան նաև «Վորլդ Վիժն» Հայաստան ՄԲԿ-ն և Բրիտանական Խորհուրդ Հայաստան կազմակերպությունը:

Ծրագիրը իրականացվեց երկու փուլով: Առաջին փուլում կազմակերպվեցին երկշաբաթյա գործնական դասընթացներ Երևանի և ՀՀ չորս մարզերի արվեստի դպրոցներում և ուսումնարաններում: «Ապագան քունն է» ԲՄՀԿ-ի ծրագրի համակարգողների դիտորդական և վերլուծական աշխատանքների արդյունքում՝ որպես ծրագրի երկրորդ՝ ամփոփիչ փուլ, իրականացվեց 2007 թվականի հուլիսի 11-ին Երևանում՝ «Մոսկվայի տանը», «Կրթություն արվեստի և արհեստի միջոցով» համաժողովը, որի մասնակիցներն ու հյուրերն ականատես եղան նաև երկշաբաթյա դասընթացների արդյունքում երեխաների կողմից պատրաստված աշխատանքների ցուցահանդեսին:

Ծրագրի ողջ ընթացքը ուղեկցվել է սոցիոլոգիական հարցումներով և վերլուծություններով:

Դասընթացների կազմակերպման աշխատանքներին աջակցել են ՀՀ Կրթության և գիտության, Մշակույթի և երիտասարդության, Աշխատանքի և սոցիալական հարցերով նախարարությունների համապատասխան վարչությունները, ինչպես նաև ծրագրում ներգրավված մարզերի մարզպետարանների համապատասխան բաժինները:

## ՀԱՄԱԺՈՂՈՎ

### «ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԱՐՎԵՍՏԻ և ԱՐՀԵՍՏԻ ՄԻՋՈՑՈՎ»

ք. Երևան 11 հուլիսի, 2007թ.  
«Մոսկվայի տուն», Նիստերի դահլիճ

#### Ծրագիր

9.30-10.00 Համաժողովի մասնակիցների գրանցում

10.00-11.00 I Նիստ

#### Բացման խոսք

**Համբարձում Սինապան** ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործերով Հայաստանի ազգային հանձնաժողովի գլխավոր քարտուղար

#### Ողջույնի խոսք

**Հրանուշ Հակոբյան** ՀՀ ԱԺ Գիտության, կրթության, մշակույթի և երիտասարդության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ

**Արևիկ Սարիբեկյան** Հայաստանում Բրիտանական խորհրդի տնօրեն

**Կարո Վարդանյան** ՀՀ Մշակույթի նախարարության աշխատակազմի մշակութային քաղաքականության վարչության պետ

**Արսեն Սողոմոնյան** ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերով նախարարության երիտասարդական քաղաքականության վարչության պետ

#### Ելույթներ

**Մարինա Հովհաննիսյան** «Վորլդ վիժն» Հայաստան Երեխաների պաշտպանության ծրագրերի ղեկավար

Երեխաների պաշտպանության ծրագրերի քաղաքականությունը.  
Կրթամշակութային միջոցառումների դերը առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների զարգացման գործընթացում

**Լալա Ղազարյան** ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության պետ

Բարեփոխումները երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում

**Արտակ Ադրայան** ՀՀ կրթության և գիտության նախարարության Նախնական և միջին մասնագիտական կրթության վարչության պետ

Նախնական և միջին մասնագիտական կրթության ոլորտի ներկա իրավիճակը և բարեփոխումների ընթացքը

**Նելլի Դուրյան** ՀՀ Ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության բաժնի պետ, ոստիկանության գնդապետ

Անչափահասների շրջանում հանցագործության կանխարգելումը զբաղվածության միջոցով

11.00-11.30 *Սուրճի ընդմիջում, երեխաների ձեռքի աշխատանքների ցուցահանդեսի դիտում*

11.30-13.00 II Նիստ

**Ելույթներ**

**Նարինե Սարգսյան** «Ապագան քոնն է» ԲՍՀԿ-ի նախագահ

Ջեկույց՝ «Ավանդական կիրառական արվեստի, տարբեր հմտությունների և կարողությունների ուսուցում» ծրագրի արդյունքների ամփոփում

**Էլինար Վարդանյան** Հասարակական Երկխոսության և Չարգացումների Կենտրոն, Գործադիր տնօրեն

Պետության աջակցությունը կրթական և մշակութային ծրագրերի իրականացումով

**Էլիզա Մինասյան** Ջինիշյան Հիշատակի Հիմնադրամ, Տնօրեն

Ծրագրեր ուղղված երեխաների հոգևոր վերելքին



**Միրա Անտոնյան**

ՀՕՖ-ի երեխաների ընդունման և կողմնորոշման կենտրոնի տնօրեն

Կյանքի առավել դժվար պայմաններում հայտնված երեխաների հետ աշխատանքի ժամանակակից մոդել Հայաստանում. ՀՕՖ-ի երեխաների կենտրոնի փորձը

**Սեդա Գալթախչյան**

Աջափնյակ թաղային համայնքի երեխաների սոցիալական հոգաժության կենտրոն, Տնօրեն

Արվեստի և արհեստի դերը ռիսկի ենթակա երեխաների սոցիալ- հոգեբանական վերականգնողական աշխատանքներում

**Ռամոնա Կտակյան**

ՀՕՖ-ի երեխաների ընդունման և կողմնորոշման կենտրոնի ծրագրերի ղեկավար

Արվեստի և արհեստի ուսուցումը որպես ճգնաժամի մեջ հայտնված երեխաների վերականգնման միջոց

**Հասմիկ Սկրտչյան**

Երևանի «Հատուկ տիպի» մանկատուն, Տնօրեն

Մշակութային հիմնախնդիրները հատուկ կրթահամակարգում

**Վահագն Գրիգորյան**

«Վորդ վիժմ» Հայաստան Տավուշի ՏԶԾ ղեկավար

Մշակութային խմբակների գործունեության միջոցով համայնքային կենտրոններում հատուկ կարիքով երեխաների ինտեգրումը

**Լյուդմիլա Մելիքյան**

ՀՀ Մշակույթի նախարարության մշակութային քաղաքականության վարչության պետական ծրագրերի բաժնի գլխավոր մասնագետ

Գեղարվեստական կրթության հիմնահարցերը մշակութային քաղաքականության դիտակետից

**Գեորգի Հախնազարյան**

Հ. Դանիելյանի անվան արվեստի դպրոց

Կրթություն երաժշտության և գեղարվեստի միջոցով

**Կարինե Հարությունյան**

«Ծիծեռնակ» ՀԿ, Գործադիր տնօրեն

Ինքնահաստատման տանող ճանապարհին արվեստի և արհեստի միջոցով

13:00-14:00 Ընդմիջում, երեխաների ձեռքի աշխատանքների ցուցահանդեսի դիտում

14:00-15:30 «Ավանդական կիրառական արվեստի, տարբեր հմտությունների և կարողությունների ուսուցում» ծրագրի ամփոփիչ սեմինար

***Հաշվետու զեկույցներ – Ծրագրի արդյունքների ամփոփում և քննարկում ըստ ոլորտների***

**Հակոբ Մաթևոսյան** Ծրագրի սոցիոլոգ

**Ծրագրի հաշվետու զեկույց**

**Արմինե Պողոսյան** Ծրագրի Երևանի քաղաքի համակարգող

**Ծրագրի հաշվետու զեկույց**

**Դիանա Կարապետյան** Երևանի Հ. Դանիելյանի անվան արվեստի դպրոց, փորձագետ

Արվեստը որպես գեղարվեստական ճաշակ դաստիարակելու միջոց

**Լուսինե Սեփյանյան** Տավուշի մարզի Ազատամուտի «Ձեռքի աշխատանքի» խմբակում ընդգրկված երեխայի ծնող

Ձեռքի աշխատանքի ներգործությունը երեխայի կյանքում

**Թեհմինե Կարախանյան** Ծրագրի Արարատի մարզի համակարգող

**Ծրագրի հաշվետու զեկույց**

**Վայա Հարությունյան** Արարատի մարզի Մասիս քաղաքից ծրագրի «Տիկնիկագործություն և փափուկ խաղալիքներ» խմբակին մասնակցած երեխայի ծնող

Մշակույթի դերը երեխայի դաստիարակման հարցում

**Ռուզաննա Հակոբյան**

Արարատի մարզի Մասիս քաղաքից ծրագրի «Ասեղնագործություն և դիզայն» խմբակյին մասնակցած երեխա

Հազեցած առօրյա

**Քնարիկ Գևորգյան**

Ծրագրի Կոտայքի մարզի համակարգող

**Ծրագրի հաշվետու գեկույց**

**Ամալյա Սկրտչյան**

Կոտայքի մարզի Արովյան քաղաքից ծրագրի «Խեցեգործություն» խմբակյին մասնակցած երեխայի ծնող

Արվեստի և արհեստի դերը իմ երեխայի կյանքում

## **Բացման խոսք**

**Համբարձում Մինասյան**  
**ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործերով Հայաստանի**  
**ազգային հանձնաժողովի գլխավոր քարտուղար**

Մեծարգո հյուրեր, հարգելի տիկնայք և պարոնայք,

Պատիվ ունեմ բացման խոսքս ուղղելու այսօրվա միջոցառման մասնակիցներին և ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործերով Հայաստանի ազգային հանձնաժողովի անունից ողջունել բոլորիդ «Կրթություն արվեստի և արհեստի միջոցով» խորագիրը կրող այս համաժողովին: Ընորհակալություն հրավերն ընդունելու համար: Ընորհակալություն եմ ուզում հայտնել նաև բոլոր այն նախարարություններին և կազմակերպություններին, որոնք միացան ՅՈՒՆԵՍԿՕ-ի նախաձեռնությանը և իրենց ներդրումը կատարեցին կազմակերպելու համար այսօրվա միջոցառումը և դրան նախորդած երկշաբաթյա ուսուցողական դասընթացները, որոնց նպատակն էր Երևանում և հանրապետության այլ մարզերում սոցիալապես անապահով, հատուկ կարիքներով և թույլ մտավոր կարողություններով երեխաներին տալ գիտելիքներ և հմտություններ արհեստի և արվեստի տարբեր ոլորտներում:

Ուրախ եմ, որ ծրագիրը ինչ-որ կերպով կնպաստի այդ երեխաների ինքնուրույնության ձևավորմանը, մասնագիտական կողմնորոշմանը, սոցիալիզացման խորացմանը և հնարավորություն կտա ապագայում օգտակար լինել թե հասարակությանը, թե սեփական ընտանիքին: Ծրագրի մյուս նպատակներից է նաև հասարակության ուշադրությունը հրավիրել այն ավանդական արվեստներին և արհեստներին, որոնց միջոցով հնարավոր կլինի կատարելագործել բնակչության խոցելի խմբերի ունակություններն ու

հմտությունները՝ հետագայում հասարակության մեջ նրանց առավել արդյունավետ և շահավետ կերպով ներգրավվելու համար:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի առաքելությունն է՝ մշակույթի, կրթության և գիտության միջոցով հաստատել խաղաղություն և համերաշխություն ամբողջ աշխարհում: Ի վերջո այս վեհ նպատակին է ուղղված մեր նախաձեռնությունը:

Ներկայումս կրթության ոլորտում ՅՈՒՆԵՍԿՕ-ն առանձնակի ուշադրություն է հատկացնում հաշմանդամ և սոցիալապես անապահով երեխաների կրթությանը արվեստի և արհեստի միջոցով, որպես ընդհանուր կրթական համակարգի կարևորագույն բաղադրիչ և բոլորի համար որակական կրթություն ապահովելու կարևոր միջոց: ՅՈՒՆԵՍԿՕ-ն կարևոր է համարում նաև կրթության նկատմամբ միջառարկայական մոտեցման խրախուսումը, այս դեպքում խոսքը գնում է կրթության նկատմամբ մշակութային մոտեցման մասին: Կրթության մեջ մշակութային գործոնների ներգործությունը մեծ ազդեցություն է ունենում անհատի անձնական զարգացվածության բարձրացման և համընդհանուր արժեքներին առավել սերտ հաղորդակից լինելու առումով:

Անդրադառնալով հաշմանդամ երեխաների խնդիրներին, կուզենայի նշել, որ եթե նախկինում ընդունված էր հաշմանդամության բժշկական մոդելը, ըստ որի հաշմանդամությունը դիտվում էր որպես հիվանդություն, ապա ներկայումս այս առումով համաշխարհային ճանաչում է ստացել հիմնախնդիրների դիտարկման սոցիալական մոդելը, այդ թվում նրանց կրթության մեջ մշակութային գործոնների ներառումը: Այս նոր գաղափարախոսությունն ամրագրված է նաև ՍԱԿ-ի ստանդարտ կանոններում և ենթադրվում է այնպիսի իրավիճակի ստեղծում, երբ հաշմանդամներն ի սկզբանե հասարակության մյուս անդամների հետ հավասար իրավունքներ ունենալով, կունենան նաև հավասար հնարավորություններ և պարտականություններ: Բազմաթիվ փաստեր վկայում են այն մասին, որ հաշմանդամ լինելը ամենևին չի նշանակում չմասնակցել կյանքի անցուղարձին: Ավելին՝ հաշմանդամության փաստը չի խոչընդոտել, որ շատ մարդիկ դառնան գիտության, արվեստի, գրականության և այլ ոլորտների խոշորագույն դեմքեր:

Կրթական հատուկ կարիքներ ունեցող յուրաքանչյուր երեխայի կրթությունը շաղկապված է դժվարություններով: Վաղ հասակից կրթությունը և մասնագիտական կողմնորոշումը ստեղծում են նախադրյալներ նրա ինքնուրույն և անկախ ապագայի, անձի արժեվորման համար: Այստեղ չափազանց կարևոր է զբաղվածության ապահովման ցուցանիշը: Ապագայում աշխատանքով ապահովված լինելը երեխաներին լավատեսություն և ինքնավստահություն է հաղորդում, հասարակության և ընտանիքի համար բեռ լինելու փոխարեն պիտանի լինելու գիտակցությունը օգնում է ազատվելու իր անձի նկատմամբ անլիարժեքության բարդույթից:

Այս ամենը հաշվի առնելով, ՅՈՒՆԵՍԿՕ-ն նախաձեռնեց տվյալ ծրագիրը Հայաստանում և մտադիր է շարունակել աշխատանքներն այս ուղղությամբ նաև ապագայում:

Հատուկ շնորհակալություն եմ հայտնում “Ապագան քոնն է” կազմակերպության նախագահ տիկին Նարինե Սարգսյանին և իր աշխատակազմին ծրագիրն արդյունավետ կերպով կազմակերպելու և սրտացավ վերաբերմունքի համար: Մեկ անգամ ևս թույլ տվեք ողջունել բոլորիդ և մաղթել արդյունավետ աշխատանք:

## **Ողջույնի խոսք**

### **Արևիկ Սարիբեկյան**

#### ***Հայաստանում Բրիտանական խորհրդի տնօրեն***

Ես նախ ցանկանում եմ նշել, որ շատ ողջունելի եմ նմանատիպ նախաձեռնությունները, որոնք ուղղված են աջակցելու հատուկ կարիքներով և կյանքի առավել դժվար պայմաններում հայտնված երեխաներին: Նմանատիպ երեխաների ինտեգրումը հասարակություն Բրիթիշ Քաունսիլի առաջնահերթային ուղղություններից է:

Հատուկ կարիքներով երեխաներին աջակցելու և հասարակության մեջ նրանց դերի ամրապնդման համար արդյունավետ միջոց է հանդիսանում արհեստակցական կրթությունը: Այն հզոր միջոց է նաև աղքատության նվազեցման համար: Չարգացնելով հատուկ կարիքներով երեխաների ունակություններն ու հնարավորություն տալով նրանց կիրառել դրանք գործնականում՝ կօգնի ապահովել նրանց հիմնական աշխատանքով և բարելավել նրանց կյանքի որակը: Այն կօգնի նաև բարձրացնել նրանց ինքնավստահությունը կյանքում՝ գիտակցելով, որ իրենց գիտելիքներն ու ունակությունները պետք են մարդկանց և որ հասարակությունը գնահատում է դրանք:

## **Ողջույնի խոսք**

### **Կարո Վարդանյան**

#### ***ՀՀ մշակույթի նախարարության մշակութային քաղաքականության վարչության պետ***

Յուրաքանչյուր ժողովրդի հոգեբանությունը, կյանքի ու կեցության վերաբերյալ պատկերացումները լավագույնս արտացոլված են նրա բանահյուսության մեջ՝ էպոսում, ժողովրդական երգերում, հեքիաթներում, թափառող պատումներում և այլն: Մեր բանահյուսական առեղծի ժառանգության մեջ, որպես հայ մարդու տարբերակիչ հատկանիշ, հայրենասիրության հետ մեկտեղ, շարունակ շեշտադրվում է աշխատասիրությունը, հանրությանը պիտանի սերունդ դաստիարակելու, մեկ և նույնիսկ մի քանի արհեստի տիրապետելու անհրաժեշտությունը: Որպես ասվածի պերճախոս վկայություն տեղին է հիշել, ասենք, Ղազարոս Աղայանի

հանրահայտ «Անահիտ» հեքիաթը, որը դաստիարակիչ մեծ նշանակություն է ունեցել հայության մի քանի սերնդի վրա: Դրանում որևէ մասնագիտության, արհեստի տիրապետման անհրաժեշտությունը իրավացիորեն ներկայացվում է ոչ միայն որպես օրվա ապրուստը հոգալու, բարեկեցության հասնելու և հասարակության պիտանի ու լիարժեք անդամը դառնալու միջոց, այլև կյանքի այլևայլ փորձություններին դիմակայելու, դրանցից պատվով դուրս գալու նախապայման: Արվեստների ու արհեստների վարպետները մշտապես սիրված ու փառաբանված են եղել մեզանում: Դա է վկայում նաև հայոց լեզուն, որտեղ շատ են աշխատանքն ու աշխատավորին գովաբանող՝ թևավոր խոսքի ուժ ստացած այնպիսի արտահայտություններ, ինչպիսիք են «ոսկե ձեռքեր», «ոսկե մատներ», «արհեստը՝ որպես ոսկե քիլագուկ» և այլն:

Ուրախալի է, որ այս արտահայտությունները կարգախոս են դարձել մեր երկրի որդեգրած կրթական քաղաքականության համար, որի առանցքային նպատակներից մեկը նաև արհեստագործական կրթության և ուսուցման դրվածքի բարելավումն է: Սրա համար հիմք է հանդիսանում ոչ միայն տարբեր արհեստների գծով տեղական աշխատաշուկայում աճող պահանջարկը, այլև հասարակության մեջ աստիճանաբար ամրապնդվող այն գիտակցությունը, որ համատարած բարձրագույն կրթություն ստանալու մոլորցքը ոչ միշտ է արդարացված ու հիմնավորված առկա պահանջարկով և նույնքան, գուցեև ավելի, նպատակային ու հեռանկարային է նախնական արհեստագործական և միջին մասնագիտական կրթության դռները թակելը: Ինչևէ, այս ոլորտում Հայաստանը վերջին տարիներին արձանագրել է այնպիսի նշանակալի ձեռքբերումներ, ինչպիսիք են արհեստագործական ուսումնարանների վերաբացումը, մի շարք մասնագիտությունների գծով պետական կրթական չափորոշիչների մշակումը, համապատասխան օրենքի և ռազմավարության ընդունումը:

Ահա, անչափ կարևոր է ուսուցման այս ծիրում սոցիալապես անապահով, հատուկ կարիքներով և թույլ մտավոր կարողություններով երեխաների ընդգրկման համար համապատասխան պայմանների ստեղծումը: Ծիշտ է, նման երեխաները հանգամանքների բերումով զուրկ են բնականոն կենսագործունեության այս կամ այն կարողություններից, սակայն անհատական ճիշտ մոտեցման դեպքում իրենցից ներկայացնում են զգալի ներուժ՝ հասարակական կյանքին լիարժեք մասնակցություն ու նպաստ բերելու տեսանկյունից: Փորձը ցույց է տալիս, որ նրանցից շատերը համառ են ու նպատակալաց, և նրանցից յուրաքանչյուրն իրեն հատուկ որևէ կարողության շարունակական զարգացման ու կատարելագործման շնորհիվ ձգտում է փոխհատուցել, կոմպենսացնել բոլոր այն կարողություններն ու հմտությունները, որոնցից զրկված է ի ծնե կամ զրկվել է ինչ-ինչ հանգամանքների բերումով: Ահա պետության ու հասարակության խնդիրը այդ անհատական մոտեցումն է, նման երեխաներից յուրաքանչյուրի ունակությունները բացահայտելն ու զարգացնելը, նրանց համար մատչելի ու նախընտրելի արվեստի ու արհեստի որևէ տեսակով զբաղվելու և հմտանալու հնարավորություն տալը: Այս ասպարեզում առկա վիճակը, ցավոք, հեռու է մխիթարական լինելուց, իսկ ներկա միջոցներն ու հնարավորությունները

խիստ անհավասար են բաշխված՝ մայրաքաղաք-մարզեր համայնքներ համեմատական դիտակետից: Առայժմ միակ մխիթարությունը թերևս այն է, որ այս ոլորտում պետությունը որպես գործընկեր ունի մի շարք շահագրգիռ հասարակական ու միջազգային կազմակերպությունների, որոնք գործնական քայլերով միշտ հրատապ են պահում հատուկ կարիքներով երեխաներին հասարակական լիարժեք կյանքում ինտեգրելու խնդիրը:

Սիրով ողջունում են «Ապագան քոնն է» կազմակերպության և ՅՈՒՆԵՍԿՕ-ի հայաստանյան գրասենյակի համատեղ ծրագիրը, համաժողովին մաղթում բեղմնավոր աշխատանք և հույս հայտնում, որ շահագրգիռ ելույթների ու քննարկումների արդյունքում կուրվագծվեն այն ցանկալի հեռանկարները, որոնք որպես նպատակ որդեգրել են ծրագրի հեղինակները:

## **Ողջույնի խոսք**

**Արսեն Սողոմոնյան**

***ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի  
նախարարության երիտասարդական  
քաղաքականության վարչության պետ***

Համաժողովի հարգելի մասնակիցներ, հյուրեր, տիկնայք և պարոնայք

Ողջունում են համաժողովի բացման կապակցությամբ:

Կարևորում են «Ապագան քոնն է» բարեգործական սոցիալական հասարակական կազմակերպության կողմից կազմակերպված «Կրթություն արվեստի և արհեստի միջոցով» ծրագիրը, հատկապես սոցիալապես խոցելի խմբերի երեխաների և պատանիների ուսուցման միջոցով՝ վերջիններիս սոցիալ-հասարակական ինտեգրմանն աջակցելու առումով: Ծրագրի թիրախ ընտրված երեխաները հասարակության և պետության կողմից առավելագույն ուշադրության և հոգատարության կարիք ունեն:

Այս առումով կարևորում են հասարակության սոցիալապես անապահով, խոցելի խմբերի հիմնախնդիրների լուծման ուղղությամբ՝ հասարակական, միջազգային կազմակերպությունների և պետության համագործակցության ընդլայնումը: Այդ համագործակցության հաջողված բազմաթիվ օրինակներ կարելի է բերել, որոնցից կցանկանայի նշել ՀՀ ոստիկանության և հասարակական կազմակերպությունների համագործակցությունը՝ թափառաշրջիկ և մուրացիկ, ռիսկային խմբի երեխաների հիմնախնդիրների լուծման ուղղությամբ: Արդյունքում վերջին տարիներին արձանագրվում են վերջիններիս թվի նվազման միտումներ: Պետության կողմից իրականացվում են օրենսդրական նախաձեռնություններ, որոնք ուղղված են հատկապես հասարակության խոցելի խմբերի, հաշմանդանների հիմնախնդիրների լուծմանը, նրանց սոցիալական ինտեգրացիային: Իրավական ոլորտում նույնպես ակներև են վերոնշյալ

համագործակցության արդյունքները: Պետք է նշեմ սակայն, որ այս ուղղությամբ դեռ բավական անելիքներ կան: Կարելի է քննարկել հարկային և վարկային արտոնությունների սահմանման միջոցով՝ բացառապես հատուկ կարիքներ ունեցող մարդկանց և հաշմանդամների աշխատատեղերով արտադրական փոքր ձեռնարկությունների ստեղծման խրախուսումը: Ջրաղվածության ապահովումը, որն այսօր մեր պետության ու հասարակության առաջնահերթ խնդիրներից է, առավել ցավոտ հիմնախնդիր է խոցելի խմբերի քաղաքացիների շրջանում: Այս ուղղությամբ կարևոր է հատկապես նրանց մասնագիտական ուսուցումը, վերապատրաստումը՝ աշխատաշուկայի փոփոխվող պահանջներին համապատասխան մրցունակության ապահովումը: Ջրաղվածության ապահովումը հնարավորություն է տալիս նրանց զգալ հասարակության լիարժեք անդամ, լուծում է սոցիալական ինտեգրացիայի, սոցիալական պաշտպանության խնդիրները:

Ահա այս առումով եմ կարևորում «Ապագան քոնն է» բարեգործական սոցիալական հասարակական կազմակերպության կողմից կազմակերպված «Ավանդական կիրառական արվեստի, տարբեր հմտությունների և կարողությունների ուսուցում» ծրագիրը, որը հնարավորություն տվեց շատ երեխաների ձեռք բերված գիտելիքների, արվեստի և արհեստի միջոցով հետագայում ապահովել սեփական զբաղվածության խնդիրը, շփվել գեղեցիկի հետ, զարգացնել ներաշխարհը և զգալ հասարակության և պետության կողմից իր հանդեպ եղած հոգատար վերաբերմունքը:

Հետայսու հայտնում եմ նախարարության պատրաստակամությունը՝ համագործակցելու վերոնշյալ և այլ ծրագրերի շրջանակներում, առաջարկելով մարզային երիտասարդական կենտրոնների տեխնիկական և կազմակերպչական աջակցությունը:

Երիտասարդության ոլորտում արվող ներդրումը ամենաշահեկանն է, քանզի երիտասարդությունն է կերտում երկրի ապագան: Կիրթ, առողջ, սոցիալապես ապահով և հայրենասեր երիտասարդություն այսօր՝ նշանակում է զարգացած և հզոր հայրենիք վաղը:

Շնորհակալություն:



## **«Կրթություն արվեստի և արհեստի միջոցով» համաժողովի ելույթներ**

### **«Ավանդական կիրառական արվեստի, տարբեր հմտությունների և կարողությունների ուսուցում» ծրագրի իրականացման արդյունքների մասին հիմնական զեկույց**

**Նարինե Սարգսյան  
«Ապագան քոնն է» ԲՄՀԿ-ի նախագահ**

Հարգելի համաժողովի մասնակիցներ, հյուրեր տիկնայք և պարոնայք,

Թույլ տվեք ողջունել Ձեզ «Ավանդական կիրառական արվեստի, տարբեր հմտությունների ու կարողությունների ուսուցում» ծրագրի շրջանակներում կազմակերպված «Կրթություն արվեստի և արհեստի միջոցով» խորագիրը կրող համաժողովին:

Հարգելի գործընկերներ,

«Ապագան քոնն է» ԲՄՀԿ-ն 2007թ-ի հունիս ամսից ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործերով ազգային հանձնաժողովի հետ համատեղ Մոսկվայում ՅՈՒՆԵՍԿՕ-ի գրասենյակի հովանավորությամբ, «Վորլդ Վիժն» Հայաստան կազմակերպության աջակցությամբ և Բրիտանական Խորհուրդ Հայաստան կազմակերպության համաֆինանսավորմամբ իրականացնում է «Ավանդական կիրառական արվեստի, տարբեր հմտությունների ու կարողությունների ուսուցման» մշակութային ծրագիրը, որի նպատակն էր սոցիալապես անապահով, հատուկ կարիքներով և թույլ մտավոր կարողություններով երեխաներին տալ գիտելիքներ և հմտություններ արհեստի և արվեստի տարբեր ոլորտներում, որը կօգնի նրանց ինքնուրույնության ձևավորմանը, մասնագիտական կողմնորոշմանը և հնարավորություն կտա օգտակար լինել, թե հասարակությանը, թե սեփական ընտանիքին: Արհեստը և պետության կողմից տրված կրթությունը կօգնեն երեխաներին հետագայում ճիշտ ուղի ընտրել աշխատանքով ապրել, որը իր հերթին կնպաստի պետության համար այնքան կարևոր հարցի լուծմանը հմուտ արհեստավորների ապահովմանը, ինչի պակասը այսօր շատ է զգացվում:

Հատուկ դպրոցների հոգաժողովի տակ գտնվող երեխաների մեծ մասը դպրոցն ավարտելուց հետո հայտնվում են փողոցում, չեն կարողանում գտնել աշխատանք, չեն կարողանում հոգալ իրենց հանապազօրյա հացի խնդիրը և շատ հաճախ դառնում է հանցագործ կամ ծանր բեռ հասարակության համար: Այն փաստը, թե նրանք պիտանի չեն հասարակությանը կամ անկարող են որևէ օգտակար բան անելու թյուր է: Պետք է օգնել նրանց, որպեսզի իրենց մերդրումն ունենան՝ սեփական կյանքի

պայմանների բարելավմանն ու հասարակության լիարժեք անդամ դառնալու համար:

«Ավանդական կիրառական արվեստի, տարբեր հմտությունների ու կարողությունների ուսուցում» ծրագիրն ուղղված էր վերոհիշյալ խմբին և նրանց վերաբերող խնդիրներին:

Ծրագրի շրջանակներում կազմակերպվել են երկշաբաթյա փորձնական դասընթացներ Երևանում և ՀՀ 4 մարզերում /Շիրակ, Կոտայք, Արարատ, Տավուշ/, որը նպատակ ուներ երեխաներին հնարավորություն տալ ձեռք բերել տարրական հմտություններ կիրառական արվեստի և արհեստների իրենց կողմից նախընտրած ոլորտներում:

Թիրախ խմբի ընտրությունը կատարվել է ՀՀ Կրթության և գիտության նախարարության աջակցությամբ: Նրանց միջոցով նախօրոք պայմանավորվածություն է ձեռք բերվել երեխաների համապատասխան խմբերի հետ աշխատող հաստատությունների և դպրոցների հետ, Երևանում և մարզերում: Յուրաքանչյուր մարզից ծրագրին մասնակցել են բարձր դասարանների շուրջ 30 սոցիալապես անապահով և հատուկ կարիք ունեցող երեխա, ընդհանուր առմամբ Երևանից և ՀՀ չորս մարզերից ծրագրին մասնակցել են 130 երեխա, որոնք ընդգրկվել են մասնագիտական 10 խմբակներում:

Երկշաբաթյա դասընթացները անցկացվել են Երևանում և ծրագրում ներգրավված մարզերում առկա Արվեստի դպրոցներում, միջին մասնագիտական ուսումնարանում, ինչպես նաև Վորլդ Վիժն միջազգային կազմակերպության մանկական համայնքային կենտրոններում, քանի որ այնտեղ արդեն կային դասընթացներն իրականացնելու համար անհրաժեշտ պայմաններ:

Շիրակի և Տավուշի մարզերում ծրագրի իրականացումը կազմակերպել է Վորլդ Վիժն միջազգային կազմակերպությունը, Կոտայքի ,Արարատի մարզերում և Երևանում աշխատանքները իրականացվել են «Ապագան քոնն է» ԲՄՀԿ-ի աշխատանքային խմբի կողմից: Երեխաների համար նախատեսված էքսկուրսիաներն ու այցելությունները գործարաններ և մշակութային վայրեր իրականացվել են Հայաստանում Բրիտանական Խորհրդի ֆինանսավորմամբ:

Ծրագրի աշխատանքները կազմակերպելու համար մարզերում ծրագրի համակարգողները ամեն օր եղել են մարզերում, վերահսկել են աշխատանքները գրանցել արդյունքները, տպավորությունները, զրույցներ են անցկացրել երեխաների, ծնողների և ուսուցիչների հետ, կազմակերպել են էքսկուրսիաներ և հանդիպումներ համապատասխան մասնագետների հետ:

Ծրագրի ողջ ընթացքը ուղեկցվել է սոցիոլոգիական բանավոր հարցումներով / կարիքի գնահատում, ընթացքի մասին ուսումնասիրություն, արդյունքների ամփոփում/:

Դասընթացներն սկսելուց առաջ կատարվել է սոցիոլոգիական ուսումնասիրություն/հարցում/ տեղանքի ռեսուրսների մասին, հանդիպումներ են եղել երեխաների և նրանց ծնողների հետ՝ երեխաների

ընդունակություններն ու նախասիրություններն իմանալու նպատակով, կազմակերպվել է փոքրիկ հարցում-մրցույթ ,երեխաների մոտ ոգևորությունն ավելի մեծացնելու նպատակով:

Երկշաբաթյա դասընթացների ժամանակ հնարավորինս մատչելի և հետաքրքիր ձևով երեխաներն ստացել են տվյալ արհեստի կամ արվեստի մասին պատմող հետաքրքիր տեղեկություններ, ավանդույթներ, ինչի շնորհիվ երեխան իր կատարած աշխատանքը իմաստավորել է և մեծ սիրով ու պատասխանատվությամբ է մոտեցել իր գործին:

Գործնական աշխատանքի ընթացքում երեխաները ձեռք են բերել հմտություններ, կատարել են ինքնուրույն և խմբային աշխատանքներ:

Ստացված գիտելիքների ամրապնդման համար կազմակերպվել է այց որևէ գործարան, ցուցասրահ կամ արհեստանոց: Հանդիպումներ են եղել ընտրված բնագավառի մասնագետների հետ:

Դարեր շարունակ արվեստն ու արհեստագործությունը հայ ժողովրդի կողմից ընկալվել է իբրև սեփական գոյության պահպանման, կենսագործունեության և բարեկեցության ապահովման, շփումների և նոր կապերի ստեղծման անհրաժեշտ միջոց: Դեռևս հնում հայերն աչքի էին ընկնում ոչ միայն արհեստագործական հմտություններով, սեփական արհեստագործական ուղղությունների ու իրերի բազմազանությամբ, այլև արհեստագործական իրերի ներքին և արտաքին առևտրի կազմակերպմամբ: Հնում հատուկ արհեստանոցների ու վարպետների միջոցով մեծ տեղ էր տրվում նաև արհեստագործական հմտությունների փոխանցմանը սերնդեսերունդ: Հմտությունների փոխանցումը նաև ապահովում էր ժողովրդի գրագիտությունը, սեփական գրի ու մշակույթի հանդեպ հարգանքի ձևավորումը, երկրի պաշտպանության ապահովումը, կենցաղավարության և այլ հարցերի կարգավորումը, ինչպես նաև արհեստներին վերաբերող նորամուծություններն ու դրանց շարունակական զարգացումը: Հայաստանը հարուստ է արհեստագործությամբ և արվեստին վերաբերող նյութերով և ավանդույթներով: Արվեստի, արհեստների ու արհեստագործության հանդեպ սերն ու հետաքրքրությունն արտահայտվել են ժողովրդական բանահյուսության՝ հատկապես հեքիաթների մեջ:

Այս ծրագրի շարունակելիությունը կխթանի այնպիսի միջոցառումների իրականացումը, որոնք ուղղված են մեր երկրի բնակչության սոցիալական ներդաշնակեցմանը, աղքատության նվազեցմանը, երեխաների և երիտասարդության վերաբերյալ նոր նախաձեռնությունների ներդրմանը:

Ծրագրի ընթացքում կազմակերպված երկշաբաթյա դասընթացներն ապացույցն են այն բանի, որ մեր երեխաներն իրականում անտարբեր չեն հայկական մշակույթի նկատմամբ: Կարծում են, որ եթե ճիշտ ժամանակին ու ճիշտ ձևով ներկայացվի ամեն ինչ, արդյունքները շատ չեն ուշանա:

Արվեստի և արհեստի կարևորությունը, նրանց դաստիարակչական մեծ նշանակությունը շեշտելուց բացի, կարծում են մենք նաև պետք է մշակենք երեխաներին արվեստը մատուցելու նոր մոտեցումներ: Քանի որ այսօր մարդիկ նախընտրում են կարճաժամկետ դասընթացների միջոցով հմտանալ որևէ բնագավառում, գիտելիքների անհրաժեշտ պաշար ձեռք

բերել, ուստի առաջարկում են ամառային արձակուրդների ընթացքում երեխաների համար կազմակերպել նման եռամսյա դասընթացներ, կարճ ժամանակահատվածում երեխաներին ներգրավել արվեստի և արհեստի մեջ, հնարավորություն տալ նրանց տեսնել իրենց աշխատանքի արդյունքը, ոգևորել ու սեր առաջացնել դեպի արվեստը:

Բնականաբար շատ կարճ ժամանակահատվածում դժվար է երեխաներին տալ գիտելիքների անհրաժեշտ պաշար, բայց հնարավոր է սեր արթնացնել դեպի արվեստն ու արհեստը, ծանոթացնել արվեստի և արհեստի համապատասխան տեսակին հատուկ գաղտնիքներին, որպեսզի, ցանկության դեպքում, երեխան հնարավորություն ունենա խորացնել ստացած հմտություններն ինքնակրթությամբ:

Անհրաժեշտ է նաև պատշաճ ուշադրություն դարձնել երեխաների ձեռքի աշխատանքների իրացման խնդրին: Չարգացած երկրներում ընդունված և համակարգված է խոցելի խմբի երեխաների ձեռքի աշխատանքների վաճառքի կազմակերպումը: Առաջարկում և կոչ են անում համանման մոտեցում ու դաստիարակություն մշակել և տարածել Հայաստանում, քանի որ վստահ են, որ միմյանց օգնելու և աջակցելու ներքին ցանկություն կա յուրաքանչյուր հայ մարդու մեջ, և սա նույնպես մեր մշակույթին ու արմատներին հավատարիմ մնալու ևս մի հնարավորություն է:

Ձեկույցս ուզում են ավարտել Մարտիրոս Մարյանի խոսքերով.

«Արվեստի հարուցած հրճվանքը մշտական է, նա միշտ ընկերակցում է մարդուն, դարձնում նրան ավելի հզոր ու ընդունակ»: Այս խոսքերի ճշմարտության մեջ ես համոզվեցի՝ ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում տեսնելով երեխաների հրճվանքից փայլող դեմքերը:

## **Երեխաների պաշտպանության ծրագրերի քաղաքականությունը. Կրթամշակութային միջոցառումների դերը առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների զարգացման գործընթացում**

*Մարինա Հովհաննիսյան  
«Վորլդ Վիժն» Հայաստան միջազգային  
բարեգործական կազմակերպության  
Երեխաների պաշտպանության ծրագրերի ղեկավար*

Վորլդ Վիժն Հայաստան միջազգային բարեգործական կազմակերպությունը ներկայումս իրականացնում է տարածքային զարգացման ծրագրեր Հայաստանի 6 մարզերում և իր թե՛ ոլորտային և թե՛ տարածքային ծրագրերն իրականացնելիս առաջնորդվում է երեխայակենտրոն քաղաքականությամբ: ՎՎ Հայաստանի Երեխաների Պաշտպանության Ծրագրերի շրջանակներում մենք հետամուտ ենք լինում մի շարք հիմնական խնդիրների լուծմանը, որոնցից են.

- երեխաների լքման և հատուկ հաստատություններում տեղավորվելու կանխարգելումը
- հատուկ հաստատություններում այդ երեխաների իրավունքների պաշտպանությունը և բարեկեցության ապահովումը
- հատուկ հաստատությունների բեռնաթափումը և երեխաների վերադարձը ընտանիք
- հատուկ կարիքներով կամ հաշմանդամ երեխաների ինտեգրումը հանրակրթություն

Հատուկ կարիքներով և դժվար վիճակում գտնվող երեխաների հիմնախնդիրների լուծումը անհնար է առանց նրանց ընտանիքների խնդիրների լուծմանը համալիր մոտեցում ցուցաբերելու և առանց պետության, միջազգային և տեղական ՀԿ-ների, հիմնադրամների, ստեղծագործական միությունների և երեխաների պաշտպանության բոլոր մյուս շահագրգիռ օղակների հետ սերտ համագործակցության: Միայն համախմբված ուժերով մենք կկարողանանք լուծում տալ այն մարտահրավերներին, որոնք ծառանում են Հայաստանի Հանրապետությունում երեխաների պաշտպանության համակարգի կայացման ճանապարհին:

Ծանոթանալով «Ավանդական կիրառական արվեստի, տարբեր հմտությունների և կարողությունների ուսուցում» ծրագրին, որը նախաձեռնել է «Ապագան քոնն է» ՀԿ-ն, Վորլդ Վիժն-ը պատրաստակամություն հայտնեց համագործակցելու և համաֆինանսավորելու այս ծրագիրը, քանզի աշխատանքային փորձը ցույց է տվել, որ առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության և զարգացման խնդիրները մեր իրականության մեջ հնարավոր չէ լուծել միայն ուսումնական հաստատություններում նրանց ընդգրկմամբ: Կրթության իրավունքի իրացումը երեխայի դաստիարակությունը միայն մասամբ է ապահովում: Առաջնային է դառնում երեխաների ստեղծագործական հնարավորությունների բացահայտման և դրսևորման նոր միջոցների որոնումը՝ ի դեմս բազմապիսի խմբակներում նրանց ընդգրկման:

ՎՎ-ի ԵՊԾ համայնքային կենտրոններին կից տարբեր արհեստագործական խմբակների գործունեությունը վերլուծելիս, կուզեի նշել դրանց հետևյալ կարևոր դերակատարումը երեխայի զարգացման մեջ.

- երեխայի մոտ սեփական անձի բացահայտումը,
- ստեղծագործական հնարավորություններ զարգացնելը,
- երեխայի հոգևոր-մշակութային զարգացմանը օժանդակելը,
- թերապևտիկ բնույթը,
- երեխայի ինտեգրմանը նպաստելը:

Այս ծրագիրը պետք է լինի շարունակական: Եվ այսօր արդեն մենք պետք է մտածենք, թե ինչպես ենք հատուկ կարիքներ ունեցող երեխաների համար ապահովելու որակյալ մասնագիտական կրթություն, ինչպիսի բարեփոխումներ են հարկավոր օրենսդրական դաշտում և աշխատանքային

շուկայում, որպեսզի այսօրվա հատուկ կարիքներ ունեցող երեխան մասնագիտական կողմնորոշում ձեռք բերի խմբակների օգնությամբ, հետագայում ստանա որակյալ մասնագիտական կրթություն և ի վերջո գտնի իր տեղը և դերը աշխատանքում: Միայն այդ ժամանակ մենք կկարողանանք խոսել լիարժեք ինտեգրման, հավասար իրավունքների և հասարակության լիարժեք անդամ լինելու մասին:

## **Նոր մոտեցումներ երեխաների հիմնախնդիրներին**

**Լալա Ղազարյան**

### ***ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության պետ***

Միևեկ երեխաներ, հարգելի գործընկերներ, տիկնայք և պարոնայք, Ողջունում եմ «Կրթություն արվեստի և արհեստի միջոցով» համաժողովի բոլոր նախաձեռնողներին, հովանավորներին և մասնակիցներին:

Կարևորելով ավանդական արհեստների և կիրառական արվեստի, տարբեր հմտությունների ու կարողությունների միջոցով հատուկ կարիք ունեցող երեխաների ուսուցումը, համոզված եմ, որ այն մեծ ներուժ է հանդիսանում նրանց գիտելիքներով հարստացնելու համար:

Այդ գիտելիքները և գեղագիտական գործունեությունը ընդհանուր առմամբ ընդլայնում են երեխայի արտաքին աշխարհի մասին ձևավորված պատկերացումները, տեսադաշտը, զարգացնում նրա ճանաչողական հնարավորությունները, օգնում են հատուկ կարիքներով երեխաների մոտ ձևավորել ինքնուրույնության որոշակի նոր դրսևորումներ, ապահով և պաշտպանված զգալ իրեն, նաև վայելել ստեղծագործության բերկրանքը:

«Կրթությունը արվեստի և արհեստի միջոցով» գիտագործնական համաժողովի անցկացման անհրաժեշտությունն ակնհայտ է, հատկապես, երբ ոլորտում բարեփոխումներ են իրականացվում:

Այսօր մեկ անգամ ևս հնարավորություն է ընձեռնվում քննարկելու հատուկ կարիքներով երեխաների նկատմամբ նպատակաուղղված պետական քաղաքականությունը և համատեղ մշակել մեխանիզմներ՝ Հայաստանում գործող հատուկ հաստատություններում երեխաների հիմնական կարիքների գնահատման, բավարարման, մասնագիտական կողմնորոշման, հմտությունների և կարողությունների զարգացման:

Արվեստի, արհեստի աշխարհի նկատմամբ հետաքրքրությունը մղում է երեխային փորձել իր ուժերը, կարողությունները, իսկ հուզական աշխարհի, արտահայտումը, սպրումների, նրա «Ես»-ի վերարտադրումը նյութի մեջ օգնում հաղթահարել սահմանափակումները, զարգացնել հաղորդակցման անհրաժեշտ ունակությունները, ֆանտազիան, ընդհանուր առմամբ կարողանալ ավելի ինքնուրույն դառնալ:

Նախարարության համակարգում գործող երկու մասնագիտացված մասնկատներում կիրառվող վերականգնողական միջոցների

արդյունավետության վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ հաշմանդամ, մտավոր կամ ֆիզիկական արատներ ունեցող երեխայի հնարավորությունների, հակումների ճիշտ գնահատումը և ուղղորդումը, շրջապատին արձագանքելու, արտահայտվելու հնարավորությունների զարգացումը կիրառական արվեստի ձևերի կամ արհեստների ուսուցանման միջոցով զգալիորեն փոխում է երեխայի տրամադրությունը, հոգեկան և ֆիզիկական վիճակը, ի վերջո նրան մատչելի դարձնում սոցիալական անհրաժեշտ հմտությունների ձեռքբերման՝ արհիլիտացիայի գործընթացը ըստ տարիքային և անհատական առանձնահատկությունների:

Պետք է նշել նաև, որ «Կյանքի դժվարին իրավիճակներում զանվոդ երեխաների 2006-2010թթ. սոցիալական պաշտպանության բարեփոխումների ռազմավարությունը» փաստաթղթում ամրագրված է Հայաստանի Հանրապետությունում գործող մասնագիտացված մանկատների և պետական հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունների գործունեության բարեփոխումը՝ երեխայի խնամքի, բուժման, դաստիարակության և զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը, երեխայի համար տեխնիկական սարքերի ձեռքբերումը, երեխայի սոցիալական և հոգեբանական վերականգնման, նրա անձի պահպանման և զարգացման համար գերակայությունների ապահովման խնդիրը:

Այդ համատեքստում իր կարևոր տեղն ունի արվեստի և արհեստների միջոցով ստացած կրթությունը, նաև մասնագիտության ձեռքբերումը և հետագա հարմարումը միջավայրին, ինչը կամուրջ է հանդիսանում անձի և հասարակության միջև:

Ավանդական արհեստների և արվեստների ուսուցումը, վարպետության դասերի պարբերական անցկացումը և նման ծրագրերի մշակումը և հետևողական ներդրումը մեր հանրապետությունում դիտվում են որպես հատուկ կարիքներ ունեցող երեխաների հիմնախնդիրներին նվիրված համաժողովի գործունեության արդյունավետության լավագույն չափանիշ:

## **Նախնական և միջին մասնագիտական կրթության համակարգը և նրա բարեփոխման առկա իրավիճակը Հայաստանի Հանրապետությունում**

**Արտակ Ադրայան**  
**ՀՀ կրթության և գիտության նախարարության**  
**Նախնական և միջին մասնագիտական**  
**կրթության վարչության պետ**

ՀՀ սոցիալ տնտեսական զարգացման գործում էական նշանակություն ունի արհեստագործական և միջին մասնագիտական որակյալ ուսուցումն ու կրթությունը:

Նրա ապահովումն ու մատչելիությունը հանրապետության տնտեսական աճի, աղքատության ու անհավասարության մեղմման կարևորագույն գործոններից մեկն է:

Հայաստանի Հանրապետությունում տնտեսական զարգացման առավել լավ արդյունքների կարելի է հասնել որոշակի պայմանների առկայության դեպքում, որոնցից առավել նշանակալի կարող են համարվել պետական կառուցվածքների, գործատուների, ՀԿ-ների, մասնավոր և միջազգային կազմակերպությունների փոխհամաձայնեցված գործողությունների արդյունքով կրթական և ուսուցման ծրագրերի համագործակցված իրականացումը, տարածաշրջանների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի կազմումը, աշխատաշուկայի ուսումնասիրումը և մոնիտորինգի անցկացումը, կրթության որակի բարելավումը, ֆինանսական ներդրումների նպատակայնությունը:

ՄԿՈՒ ներկայիս համակարգը գնահատելու համար Հայաստանի Հանրապետությունում մշակվել են հատուկ չափորոշիչներ, որոնք օգնել են բացահայտել Հայաստանում ՄԿՈՒ համակարգի 4 հիմնական խնդիրները:

Առաջինը երիտասարդների և մեծահասակների համար ողջ կյանքի ընթացքում մասնագիտական կրթության և ուսուցման անբավարար հնարավորությունն է:

Մասնագիտական կրթությունը մատչելի չէ երիտասարդների համար, խոցելի և սոցիալապես անբարենպաստ վիճակում գտնվող խմբերի համար գոյություն չունի մասնագիտական կրթություն ստանալու համապատասխան համակարգ, թույլ է նախնական և միջին մասնագիտական կրթության համապատասխանությունը և դրանց փոխկապակցվածությունը կրթության այլ մակարդակների հետ:

ՄԿՈՒ համակարգի երկրորդ խնդիրը ՄԿՈՒ իրականացման ցածր որակն է:

Այսօր համարյա թե բացակայում են նախնական և միջին մասնագիտական կրթության կրթական չափորոշիչները, իսկ գործատուների մասնակցությամբ իրականացվող կարողությունների վրա հիմնված մասնագիտական չափորոշիչների մշակման գործընթացը սահմանափակվում է ընդամենը մի քանի մասնագիտությամբ: Այսօր գործատուն իրեն հարմար որակյալ մասնագետներ ստանալու համար շահագրգռված չէ որոշակի աջակցություն ցուցաբերել մասնագիտական ուսումնական հաստատություններին և սահմանել չափորոշիչներ, որոնցով էլ կառաջնորդվեն այդ ուսումնական հաստատությունները:

ՄԿՈՒ երրորդ խնդիրն է կազմակերպական թույլ կառույցները և գործընկերությունը:

ՄԿՈՒ համակարգը հսկող գործառույթները հստակորեն սահմանված և պատշաճ կերպով բաշխված չեն, բացակայում են ուսումնական հաստատությունների կանոնավոր աջակցություն տրամադրող ենթակառուցվածքային կազմակերպությունները, ուսումնական հաստատությունները չունեն ակադեմիական, ֆինանսական և կառավարման



հարցերում ինքնավարություն, իսկ սոցիալական գործընկերությունը ՀՀ-ում համարյա թե ձևավորված չէ:

Հայաստանում ՄԿՈՒ համակարգն իրականացնում է ուսուցում՝ չառաջնորդվելով ներկայիս աշխատաշուկայի պահանջներով, այնինչ այն պետք է ուսուցումն իրականացնի՝ հաշվի առնելով աշխատաշուկայում կատարվող բոլոր փոփոխությունները և հիմնվի դրա չափորոշիչների վրա: Այն պետք է պատրաստի որակյալ մասնագետներ՝ համապատասխան գիտելիքներով, հմտություններով և մոտեցումներով, որոնք կբավարարեն ներկայիս գործատուի պահանջները: Այս ամենն իրականացնելու համար պետք է մշակվեն համապատասխան նորմեր կամ չափորոշիչներ: Այս նորմերը կամ չափորոշիչները պետք է մշակվեն ըստ պետության, կրթական ոլորտի ղեկավար մարմինների, կրթական հաստատությունների, ուսանողների պահանջների: Կարողությունների վրա հիմնված ՄԿՈՒ չափորոշիչը սահմանում է աշխատանքի տվյալ ոլորտում պահանջվող հմտությունները: Այս չափորոշիչները կարող են ուսուցման ծրագրերի, ուսումնական պլանների, մեթոդների և ուսումնառության տեխնիկայի մշակման հիմք դառնալ:

Ըստ «Կրթության մասին» ՀՀ օրենքի՝ նախնական և միջին մասնագիտական կրթության ուսումնական պլանները պետք է մշակվեն հենց իրենց՝ ուսումնական հաստատությունների կողմից: Առաջարկվում է մշակել կարողությունների վրա հիմնված չափորոշիչներ, որոնք կկապեն ՄԿՈՒ համակարգը տնտեսական հատվածի հետ և ուսուցման շուկան՝ աշխատաշուկայի հետ: Անհրաժեշտ է նաև ՄԿՈՒ որակավորումների համակարգի կառուցվածքը և չափորոշիչները դարձնել միջազգային պահանջների հետ համադրելի: Եվ քանի որ հայաստանյան աշխատաշուկան չի համապատասխանում միջազգային պահանջներին, ուստի դժվար է այն կապել ուսուցման շուկայի հետ և միաժամանակ ուսուցման շուկան դարձնել միջազգային պահանջների հետ համադրելի:

Ենթադրվում է, որ նախևառաջ աշխատաշուկան պետք է համապատասխանի միջազգային պահանջներին և մշակի այդ պահանջներին համապատասխան չափորոշիչներ, որոնցով էլ կառաջնորդվի կրթական համակարգը:

ՄԿՈՒ համակարգի երկրորդ գերակայությունն է որակի վերահսկման մեխանիզմների արդիականացումը.

ՄԿՈՒ մյուս գերակայությունն է՝ ծախսերի արդյունավետությունը և կրթական արդյունքների (ելքերի) բարելավումը:

Համաձայն փորձագետների կարծիքների՝ Հայաստանի ներկայիս ՄԿՈՒ համակարգը արդյունավետ չէ: Այն պատշաճ կերպով չի բավարարում իր հաճախորդների ու սպառողների կարիքներն ու պահանջները: Այսինքն այն պատրաստում է ոչ բավարար մասնագիտական գիտելիքներ և հմտություններ ունեցող մասնագետներ: Սա կապված է նրա հետ, որ ուսուցումն իրականացվում է առանց հաշվի առնելու ներկայիս աշխատաշուկայի պահանջները և առաջնորդվում է հին մեթոդներով:

Կարծում ենք, որ արդեն վաղուց ժամանակն է մոռանալ հին մեթոդները և մշակել կրթական նոր, ավելի ժամանակակից մեթոդներ:

Մասնագիտական կրթության որակի բարելավման նպատակով անհրաժեշտ է լիարժեք օգտագործել բոլոր դասասենյակները և արհեստանոցները, կրճատել ուսանող-դասավանդող շփման դասաժամերը, և այդ ժամանակը ծախսել դասագրքերի, դասավանդման նյութերի և ուսանողների պրակտիկայի նյութերի կատարելագործման վրա: Այսինքն ուսանողներին տալ ինքնուրույն սովորելու հնարավորություն: Այս առաջարկի դրական կողմն այն է, որ ուսանողները կլինեն ավելի ինքնուրույն և ավելի շատ կաշխատեն: Սակայն դրա համար պետք են միջոցներ՝ գրադարանի գրքերի, տեղեկատվական նյութերի, համակարգիչների մատչելիության համար: Իսկ բացասական կողմը դասավանդողների ըստ ժամաքանակի վարձատրման եղանակն է, ինչը պետք է փոխարինել մեկ այլ եղանակով: Անհրաժեշտ է նաև ՄԿՈՒ տնօրեններին ուսուցանել կառավարման համապատասխան մեթոդներ և տեխնիկա, կիրառել դասավանդողների վճարման նոր նորմեր ու կանոնակարգեր, ստեղծել նոր բազմաբովանդակ քոլեջներ, արդիականացնել ուսումնական հաստատությունների աշխատանքի մոնիտորինգի և վերահսկման նոր մեխանիզմներ:

ՄԿՈՒ հաջորդ գերակայությունը ՄԿՈՒ ֆինանսավորման օպտիմալացումն է:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ ՄԿՈՒ համակարգի ֆինանսավորման մեջ պետությունը կարող է կատարել հովանավորի (ծախսեր հոգացողի), գնորդի (ծառայությունը գնողի) և ներդնողի (կոնկրետ սոցիալ-տնտեսական արդյունքներ ստանալու համար միջոցներ ներդնողի) դեր: Հայաստանում պետությունը կատարում է միայն հովանավորի դեր, այնինչ ավելի արդյունավետ կլիներ, եթե այն կատարեր գնորդի դեր, այսինքն համապատասխան միջոցներ տրամադրեր որակյալ և իրեն հարմար մասնագետներ ստանալու համար և ապա օգտվեր այդ մասնագետների ծառայություններից: Սա լավ կլիներ ոչ միայն պետության, այլև ՄԿՈՒ շրջանավարտի համար, քանի որ նա հետագայում աշխատանք ունենալու առավել մեծ հնարավորություններ կունենար: Կարծում ենք, որ այս գործառույթը կարող է իրականացնել նաև առանձին գործատուն: Պետությունը կարող է իրականացնել այս գործառույթը «պետական պատվերի» փոխակերպման միջոցով: Ամեն տարի կրթական ծառայություններ մատուցողները ներկայացնում են «քիզնես պլան»՝ որպես «պետական պատվերի» նախագիծ: Բիզնես պլանի մեջ մտնում են առաջարկվող ուսուցման ծրագրերը և ուսանողների թիվը: Այս ցուցանիշները համաձայնեցվում են հնարավոր գործատուների և այլ շահագրգիռ կողմերի հետ: Պետությունը իրավունք ունի որոշել հատկացնել, թե չհատկացնել բյուջետային միջոցներ «քիզնես պլանով» առաջարկված կրթական ծառայությունների դիմաց:

ՄԿՈՒ վերջին գերակայությունն է ստեղծել ՄԿՈՒ արդիականացման իրականացման ու մոնիտորինգի ազգային հնարավորություններ:

Այս առաջարկությունների իրականացումը կպահանջի ՀՀ կրթության և գիտության նախարարության և Կրթության ազգային ինստիտուտի կարողությունների հզորացում: Անհրաժեշտ է վերապատրաստել հայ մասնագետների խումբ՝ գործատուների ուսումնասիրության անցկացման և մասնագիտական չափորոշիչների, ուսումնական պլանների ու դասավանդման նյութերի մշակման համար, ՄԿՈՒ տնօրենների համար մշակել կառավարման թեմայով վերապատրաստման ծրագիր, մշակել կարողությունների վրա հիմնված նոր ուսումնական պլաններ, ստեղծել ՄԿՈՒ ազգային տեղեկատվական կենտրոն:

Վերոգրյալ գերակայությունների իրականացումը կնպաստի ՄԿՈՒ համակարգի բարելավմանը, նրա նշանակության և որակի բարձրացմանը, ինչպես նաև կզարգանա գիտելիքների վրա հիմնված տնտեսությունը: ՄԿՈՒ ուսանողները կունենան սովորելու և հետազայում աշխատանք գտնելու ավելի լայն հնարավորություններ: Կրթություն ստանալու աջակցություն կստանան սոցիալապես անբարենպաստ խմբերը, և այս ծրագրի իրականացումը կխթանի նաև գործազրկության պակասեցմանը:

## **Անչափահասների շրջանում հանցագործության կանխարգելումը զբաղվածության միջոցով**

**Նեյի Դուրյան**

***ՀՀ Ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության բաժնի պետ, ոստիկանության գնդապետ***

1918 թվականից ՆԳ համակարգի անբաժանելի մասն է կազմել տարբեր տարիներին տարբեր անվանումներով հանդես եկող Անչափահասների գործերով ստորաբաժանումը, որի հիմնական նպատակը եղել է անչափահասներին զերծ պահել հակահասարակական արարքներից և նպաստել հասարակության համար պիտանի մարդու ձևավորվելու խնդրում:

Հակված ենք այն տեսակետին, որ անչափահասների հետ իրականացվող աշխատանքների համար անհրաժեշտ է հատուկ գաղափարախոսություն, առանձնակի եւ յուրովի մոտեցում: Եթե չկա առանձին գաղափարախոսություն, իսկ աշխատանքները համակարգված չեն, ապա չի լինի հիմնախնդրի լուծում:

Անչափահասների ծառայության աշխատակիցները աշխատում են մուրացիկ եւ թափառաշրջիկ, դասերից չարամտորեն խուսափող, տարբեր իրավախախտումներ, ինչպես նաև հանցագործություն կատարած անչափահասների հետ:

Ոստիկանության աշխատակիցների ուշադրության կենտրոնում են գտնվում նաև երեխաների նկատմամբ կատարվող բռնության դեպքերի կանխարգելման, հայտնաբերման եւ բացահայտման աշխատանքները:

Անչափահասների հիմնախնդիրը շատ նուրբ է, անընդհատ ուշադրություն պահանջող: Նրանց կողմից կատարվող

հանցագործությունների աճը պատճառաբանում ենք երկրի սոցիալ-տնտեսական վիճակով, շրջապատով և այլն: Հիմա եթե փորձենք, վերլուծել, թե ինչու են շատ գողության, մարմնական վնասվածքի դեպքերը, պատճառահետեւանքային կապը անպայման կգտնվի: Իսկ հիմնական պատճառներից մեկն է այն, որ ծնողը գլանում է հետեւել երեխայի վարքին՝ գերծ պահել նրան չար նկրտումներից, հեռացնել վատ շրջապատի ազդեցությունից, լուծել երեխայի զբաղվածության հարցը:

ՀՀ Ոստիկանությունը ակտիվ մասնակցություն է ունենում ՀՀ-ում երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում կատարվող բարեփոխումների գործընթացում: Ընդգրկված լինելով տարբեր միջազգային եւ տեղական հասարակական կազմակերպությունների հետ՝ ՀՀ Ոստիկանությունը հասել է նրան, որ այսօր Հայաստանում արձանագրվում է մուրացկանությամբ եւ թափառաշրջիկությամբ զբաղվող անչափահասների թվաքանակի նվազում: Տարվում են ամենօրյա աշխատանքներ վատ ճանապարհի ընտրած երեխաներին ժամանակին հայտնաբերելու եւ ճիշտ ճանապարհին կանգնեցնելու նպատակով, իրենց երեխաներին բացասական ներգործություն ունեցող, հանցագործության կամ մուրացկանության դրող չափահաս անձանց հայտնաբերման ուղղությամբ, դպրոցներում անց են կացվում գրույց-գեկուցումներ տարբեր իրավական թեմաների շուրջ: Ցանկը բավականին մեծ է այն աշխատանքների, որոնք այսօր իրականացվում են ՀՀ ոստիկանության կողմից երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում:

Սոցիալ-տնտեսական ոլորտում տեղի ունեցող փոփոխությունները, դաստիարակության ու աշխատանքի ապահովման խնդիրների վերաբերյալ համալիր ծրագրերի բացակայությունը նպաստում են անչափահասների շրջանում շարունակաբար արձանագրվող թափառաշրջիկության և իրավախախտումների դեպքերին:

Մեր կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվում է, որ հանցագործություն են կատարում հիմնականում այն անչափահասները, որոնք չեն հաճախում դպրոց, լուծված չէ վերջիններիս զբաղվածության հարցը: Անչափահասները, որոնք զբաղվում են սպորտով, կամ ունեն այլ զբաղմունք չեն հայտնվում փողոցում, վատ շրջապատում: ԵՎ եթե ցանկանում ենք ունենալ առողջ սերունդ, ապա անհրաժեշտ է լուծել վերջիններիս դաստիարակության, կրթության հարցը մաս արվեստի և արհեստի միջոցով:

Խորը գիտակցելով այն հանգամանքը, որ այսօրվա անչափահասը վաղվա մեր հասուն քաղաքացին է ու ապագան կերտողը, անհրաժեշտ է անել առավել հնարավորը հիմնախնդիրները լուծելու համար: Միաժամանակ ոստիկանության անչափահասների ծառայությունը պատրաստ է աջակցել այն բոլոր միջազգային եւ հասարակական կազմակերպություններին, որոնք կաջակցեն երեխաների հիմնախնդիրների լուծմանը:

# Պետության աջակցությունը հասարակական կազմակերպություններին մշակույթի ոլորտում

**Էլինար Վարդանյան**  
*Հասարակական երկխոսության և զարգացումների կենտրոնի  
Գործադիր տնօրեն*

Հասարակական կազմակերպությունների արդյունավետ գործունեությունը ցանկացած երկրի քաղաքացիական հասարակության կայացման և զարգացման անկյունաքարերից մեկն է: Լինելով հասարակության ակտիվ հատվածը ներկայացնող կառույցներ՝ ՀԿ-ներն ունեն այնպիսի գործառույթներ, որոնց իրացումը անհամեմատ դժվար է այլ կազմակերպությունների, երբեմն անգամ պետության կողմից՝ հասարակական խմբերի շահերի պաշտպանություն, հասարակական, մշակութային կյանքի ակտիվացում և այլն:

Ահա այս գիտակցումով էր, որ ՀՀ Նախագահի 13 մայիսի 2005թ. ՆՀ-87-Ն հրամանագրի համաձայն սկսվեց մեծամասշտաբ մի ծրագրի իրականացում, որի շրջանակներում այս երկու տարիների ընթացքում մի քանի տասնյակ հասարակական կազմակերպությունների պետություններից տրամադրվեցին դրամաշնորհներ՝ հասարակական կյանքի տարբեր ոլորտներում ծրագրեր իրականացնելու համար: Դրամաշնորհների հատկացումը ելուն է Հայաստանի Հանրապետությունում հասարակական կազմակերպությունների դերի բարձրացման, նրանց գործունեության արդյունավետության ապահովման, հասարակական կազմակերպություններին պետական աջակցության ցուցաբերման անհրաժեշտությունից և ուղղված է քաղաքացիական հասարակության ինստիտուտների կայացմանը, ժողովրդավարության խորացմանը, հասարակության իրազեկմանը, հրատապ հիմնահարցերին ուշադրության հրավիրմանը, հասարակական կազմակերպությունների ներուժի դրսևորմանն ու օգտագործմանը, հասարակական վերահսկողության մեխանիզմների կատարելագործմանը:

Դրամաշնորհային մրցույթների արդյունքում ստեղծվել է հայաստանյան հասարակական կազմակերպությունների հետ ակտիվ համագործակցային դաշտ, որը խթանում է հասարակական կազմակերպությունների նպատակային գործունեությունը, կամուրջներ է ստեղծում ինչպես իրենց՝ հասարակական կազմակերպությունների, այնպես էլ հասարակական կազմակերպությունների և ամենատարբեր՝ պետական, միջազգային և այլ շահագրգիռ կառույցների միջև:

Դրամաշնորհային մրցույթներն անց են կացվում որոշակի անվանակարգերով՝ կապված առաջնահերթ հիմնախնդիրների լուծման հետ, որտեղ առանձնակի տեղ է զբաղեցնում աջակցությունը խոցելի խմբերին և ինտեգրացիան: Որպես այս հիմնախնդրի լուծման եղանակներից մեկը դիտվում է կրթական և մշակութային ծրագրերի իրականացումը: Ուստի, 2005

թ-ից մինչ այժմ հայտարարված դրամաշնորհային մրցույթներում առանձնացվել են հետևյալ անվանակարգերը՝

- ✓ աջակցություն հասարակության խոցելի խմբերին
- ✓ մշակութային կյանքի ակտիվացում՝ ցուցահանդեսների, փառատոնների, համերգային միջոցառումների կազմակերպում
- ✓ հաշմանդամություն ունեցող անձանց համար մարզվելու հնարավորությունների ստեղծում և մարզական միջոցառումների կազմակերպում
- ✓ մարզերում մշակութային կյանքի ակտիվացում
- ✓ երիտասարդության ստեղծագործական գործունեության խրախուսում՝ ցուցահանդեսների, փառատոնների, համերգային միջոցառումների կազմակերպում:

Իրականացվող ծրագրերն ուղղված են Երևանում և մարզերում բազմաթիվ մշակութային և սպորտային միջոցառումների իրականացմանը՝ ընդգրկելով շահառուների մեծ թիվ: Ծրագրերի արդյունքում ստեղծվել են տիկնիկային թատրոններ, որտեղ տիկնիկները պատրաստվել են ծրագրերում ընդգրկված երեխաների կողմից, ցուցադրվել են բազմաթիվ ներկայացումներ ինչպես Երևանում, այնպես էլ մարզերում, կազմակերպվել են երգի և պարի, ձեռքի աշխատանքի, բեմարվեստի, կերպարվեստի, խոսքի մշակույթի, շախմատի խմբակներ, բեմադրվել են երաժշտական ներկայացումներ խուլ և համր երեխաների մասնակցությամբ, կազմակերպվել են այցելություններ մշակույթի տարբեր օջախներ, կազմակերպվել են փառատոններ հաշմանդամների մասնակցությամբ: Որպես իրականացված ծրագրերի շահառուներ են հանդես եկել տասնյակ հազարավոր մարդիկ:

Հասարակական երկխոսության և զարգացումների կենտրոնը, որպես ՀՀ Նախագահի աշխատակազմի գործընկեր կազմակերպություն, իր գոհունակությունն է հայտնում իրականացված ծրագրերի արդյունքների և շարունակելիության կապակցությամբ: Ծրագրերի արդյունքում հասարակության մի ստվար զանգված ինտեգրվել է հասարակական կյանքի համար կարևորագույն այդ ոլորտներին և շարունակում է իր ակտիվ գործունեությունը:

Պետք է նշել նաև, որ առաջիկա մրցույթներում ևս ընդգրկված կլինեն մշակութային և կրթական անվանակարգեր, քանի որ այդ ոլորտների կայացումը մեր երկրի կարևորագույն հիմնախնդիրներից մեկն է:

## **Ծրագրեր՝ ուղղված երեխաների հոգևոր վերելքին**

**Էլիզա Մինասյան**  
**«Զինիշյան» հիշատակի հիմնադրամի տնօրեն**

“Զինիշյան” հիշատակի հիմնադրամը, սկսած 1999թ -ից, աջակցում է սոցիալապես անապահով, հատուկ կարիքներ ունեցող երեխաներին և

պատանիներին: Հիմնականում դա երեխաների հոգևոր վերելքի, արվեստի կամ արհեստի բնագավառում կայացմանն ուղղված ծրագրեր են: Կան նաև նյութական օժանդակություն ցուցաբերող օգնության ծրագրեր՝ ուղղված առավել անապահով խավերին:

Երեխաների հոգևոր զարգացմանն ուղղված ցանկացած գործունեություն ուղղակի «դատապարտված» է հաջողության: Այն փոխադարձ հաճույք և բավարարվածություն է շնորհում: Անգամ մեկ հաջողված օր, մեկ անկեղծ խոսք, կամ գեղեցիկ արարք կարող է լուրջ և երկարատև ազդեցություն ունենալ երեխայի ողջ կյանքի ընթացքում, իսկ ազդեցության կայունությունն ապահովված է՝ իրենք դա երբեք չեն մոռանա:

«Ապագան քոնն է» ՀԿ-ն այն հազվագյուտ կազմակերպություններից մեկն է, որ քաջ գիտակցում է իր առաքելությունը և լիովին նվիրված է դրված նպատակներին: Նման կազմակերպությունները գործում են անկախ իրենց ֆինանսական վիճակից: Իրենց գործը կատարում են մասնագիտորեն, պատրաստակամությամբ և պատասխանատվությամբ, չեն վախենում ծանր աշխատանքից կամ պայմաններից, ինչով էլ առավել մեծ արդյունքի են հասնում: Պարզ է, որ նման կազմակերպության հետ մեր համագործակցությունը շարունակական բնույթ է կրելու:

## **Հասարակության լիարժեք և կրթված անհատ դաստիարակելու ուղին**

**Սեդա Բարսեղյան**

***Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի երեխաների իրավունքների  
պաշտպանության բաժնի պետ***

Ներկայումս Հայաստանի Հանրապետության երեխայի պաշտպանության և կրթական համակարգերը գտնվում են վերափոխումների փուլում, սահմանվում են երեխաների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմիններ, կրթական մեթոդների արդիականացման նպատակով ներդրվում են ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ, կազմակերպվում է հատուկ կարիքներով երեխաների ուսուցումը հանրակրթական դպրոցներում և այլն:

Երեխայի պաշտպանության մեկ ընդհանուր ոլորտը կառուցելու նպատակով ստեղծվել է երեխայի իրավունքների պաշտպանության եռաստիճան համակարգ՝ ազգային, մարզային և համայնքային: ՀՀ կառավարության 27.10.2005թ. N1833-Ն որոշմամբ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմը համարվել է «Երեխաների իրավունքների պաշտպանության բաժին «կառուցվածքային ստորաբաժանմամբ, որի հիմնական և կարևորագույն խնդիրն է Երևան քաղաքում երեխաների իրավունքների ու շահերի պաշտպանությունը:

Հասարակության լիարժեք և կրթված անհատներ դաստիարակելու գործում էական նշանակություն ունեն արվեստը և արհեստը, որոնց միջոցով

կրթվելը առավել անհրաժեշտ է դառնում հատուկ կարիքներով երեխաների համար, քանի որ նրանց մոտ արտաքին աշխարհի ընկալումը յուրօրինակ է և հուզական, նրանք ավելի անմիջական են արձագանքում ինչպես իրենց շրջապատող երևույթներին, այնպես էլ կրթական գործընթացին: Արհեստների յուրացումը կարևոր է նաև հետագայում երեխաների ինքնուրույն կյանքին պատրաստվելու, աշխատելու և կյանքում իրենց տեղը գտնելու համար:

Մեր ժողովուրդն ունի կուտակված հոգևոր-մշակութային հսկայական ժառանգություն, որը պատշաճ ձևով պիտի փոխանցվի և դառնա հաջորդ սերունդների սեփականությունը: Մշակութային արժեքներին հաղորդակցվելու և դրանցով դաստիարակվելու կարևորության գիտակցումը հանգեցրել է նրան, որ 1996թ. մայիսի 29-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքում առանձին հոդվածով ամրագրվել է մշակութային արժեքներին հաղորդակցվելու երեխայի իրավունքը:

Երեխաների ստեղծագործական ունակությունները խրախուսելու նպատակով երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի կողմից կազմակերպվել են կրթամշակութային միջոցառումներ՝ լուսանկարչության ոլորտում ստեղծագործող երեխաների լուսանկարչական աշխատանքների մրցույթ-ցուցահանդես, երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված, արվեստի դպրոցների սաների գեղանկարչական աշխատանքների ավանդական դարձած ցուցահանդես, ինչպես նաև հատուկ կարիքներ ունեցող շուրջ 150 երեխաների համար կազմակերպված ներկայացում Պատանի հանդիսատեսի թատրոնում:

Երևանի քաղաքապետարանի շենքային համալիրում տեղավորված Երևանի պատմության թանգարանի մշտական այցելուներն են ինչպես հանրակրթական, այնպես էլ հատուկ դպրոցների սաները:

Մեր հասարակությունը, պետությունը իր բոլոր կառույցներով պարտավոր է ըստ ամենայնի նպաստել երեխայի համակողմանի զարգացմանը, ճիշտ դաստիարակությանը, գեղեցիկ վարքագիծ և վայելուչ պահվածք ունենալուն: Այս խնդրի լուծման համար կոչված են և ամենամեծ պատասխանատվությունը առաջին հերթին կրում են ծնողները, կրթական համակարգը, տեղական ինքնակառավարման մարմինները և ամբողջ համայնքը:

Երևանի քաղաքապետարանի երեխաների իրավունքների պաշտպանության բաժինը իր ամենօրյա աշխատանքում հետևողականորեն իրականացնում է երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությունը, այդ գործում ապահովելով շահագրգիռ կառույցների համագործակցությունը



## Մշակութային հիմնախնդիրները հատուկ կրթահամակարգում

Համիկ Մկրտչյան  
ՀՊՄՀ դասախոս, մանկ. գիտ. քեկնածու,  
Երևանի «Հատուկ տիպի» մանկատան տնօրեն

Երևանի «Հատուկ տիպի» մանկատան գործունեության հիմնական նպատակը առանց ծնողական խնամքի մնացած առողջ, մտավոր և ֆիզիկական արատներ ունեցող 0-18 տարեկան երեխաների շուրջօրյա խնամքի ապահովումն է: Մանկատան գործունեության առարկան կազմակերպությունում խնամող երեխաների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն է, սոցիալ-հոգեբանական, բժշկական վերականգնման և ինտեգրման աշխատանքների իրականացումը, սննդով, հագուստով և այլ կենցաղային անհրաժեշտ իրերով ապահովումը, խնամքի և դաստիարակության ապահովումը, ուսուցման և բժշկական օգնության կազմակերպումը, նրանց կրթության ապահովումը դպրոցներում և ուսումնական հաստատություններում:

«Ապագան քոնն է» կրթամշակութային ծրագրեր իրականացնող հասարակական, բարեգործական կազմակերպության հետ աշխատում ենք մոտ 4 տարի: Տարիների ընթացքում, պրակտիկորեն համագործակցելով, մեծ ներդրումներ և առաջընթաց է նկատվել մեր երեխաների հասարակական կյանքի նկատմամբ ձևավորված նոր տիպի մոտեցումներում:

Գիտականորեն հիմնավորված է, որ վաղ մանկական հասակում առավել հեշտ է կազմակերպել արատի փոխհատուցման և երկրորդական խանգարումների շտկման աշխատանքները:

Վերջին տարիներին Հայաստանում կրթական համակարգում տեղի ունեցած մի շարք բարեփոխումներից ամենակարևորը համարվում է հատուկ կրթության հիմնահարցերը: Հատուկ կրթության միջոցով տարվող ուսուցումն ունի մի շարք կարևոր դրական կողմեր /ինտեգրում, ինքնահաստատում, ինքնավստահություն և այլն /: Սակայն հաճախ հատուկ կարիքով երեխաները հնարավորություն չեն ունենում ստանալ մասնագիտական կրթություն /տեղաշարժվելու, մտավոր դժվարությունների հետևանքով/, ինչը դժվարացնում է իրենց հետագա ինքնադրսևորումը, ինտեգրումը հասարակության մեջ: Արհեստը և արվեստը այլտերմատիվ միջոցներ են, որոնք թույլ կտան երեխային իրականացնել սեփական պաշարների օգտագործումը՝ ինքնաարտահայտվել, ինքնադրսևորվել և պլանավորել հետագա կյանքի քայլերը:

Կերպարվեստային գործունեությունը երեխաների համար ունի հատուկ կրթական և դաստիարակչական նշանակություն, քանի որ ձևավորում է հետաքրքրություն նկարչության, ծեփագործության, ապլիկացիայի և կառուցելու նկատմամբ: Գործունեության այս տեսակները նպաստում են ոչ միայն գեղագիտական ճաշակի ձևավորմանը, այլև օգնում են ծանոթանալ շրջապատող իրականությանը, հնարավորություն են տալիս կատարելու տեսողական վերլուծություն և համադրություն, խթանում

երեխաների մտածողությունը, ձեռքերի մանր շարժումները, ինչը անչափ կարևոր է գրավոր խոսքի յուրացման համար: Հատուկ կարիքներով երեխաների համար դա ունի առանձնահատուկ նշանակություն, քանի որ խանգարված է նրանց մտածողությունը, երևակայությունը, հիշողությունը, ընկալումը և մանր մտորիկան:

Մեր մանկատան երեխաներն այնպիսի հաճույքով են մասնակցում մաքրամեծի, ուլունքագործության, նկարչության, քատերական բեմականացումների, պարի և նմանատիպ այլ խմբակների, որ ժամ առաջ սովորում են իրենց դասերը՝ պարապմունքների ճիշտ ժամին ներկայանալու համար:

## **Հատուկ կարիքով երեխաների ինտեգրումը համայնքային կենտրոններում մշակութային խմբակների գործունեության միջոցով**

### **Վահագն Գրիգորյան «Վորլդ Վիժն» Հայաստան ՄԲԿ-ի Տավուշի ՏԶԾ ղեկավար**

Այս ամբիոնից ես պատիվ ունեմ ներկայացնելու Վորլդ Վիժն Հայաստանի Տավուշի և Գյումրիի Տարածքային զարգացման ծրագրերի Մանկական համայնքային կենտրոնների բազմաբնույթ խմբակներում ընդգրկված երեխաների աշխատանքները «Կրթություն արվեստի և արհեստի միջոցով» ծրագրի շրջանակներում: Այս ոլորտում մեր կազմակերպությունն աշխատում է դեռևս 1999 թվականից՝ ապացուցելով նման երեխայակենտրոն նախաձեռնությունների արդյունավետությունը երեխաների և հատկապես՝ հատուկ կարիք ունեցող երեխաների մոտ ինքնավստահության ու ինքնարտահայտման աճի, ինչպես նաև ազգային արժեքներին հաղորդակից լինելու և դրանց միջոցով շրջապատին ինտեգրվելու տեսանկյունից:

Վորլդ Վիժն միջազգային բարեգործական քրիստոնեական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի աշխատանքների զգալի մասը իրականացվում է Տարածքային զարգացման ծրագրերի (ՏԶԾ) միջոցով: Հայաստանում այսօր գործում է 9 ՏԶԾ, որոնք համախմբված են մի ընդհանուր նպատակի շուրջ՝ նպաստել երեխաների, նրանց ընտանիքների և համայնքների արժանապատիվ և բարեկեցիկ ապրելակերպի ստեղծմանը և զարգացմանը: Այս նպատակին հասնելու համար ՏԶԾ-ներում և Երևանում մեր կազմակերպությունն իրականացնում է բազմաթիվ նախագծեր առողջապահության, երեխաների պաշտպանության, կրթության, տնտեսական զարգացման և քրիստոնեական արժեքների վերականգնման ու վերագնահատման ոլորտներում:

Գյումրիի Տարածքային զարգացման ծրագիրը հիմնվել է 2001թ, իսկ առաջին մանկական կենտրոնը ստեղծվել է 2002 – ին, որտեղ մինչ օրս գործում են ձեռքի աշխատանքի, կար ու ձևի, նկարչական, պարի և անգլերենի խմբակներ: Վերջին չորս տարիներին աշխատելով երեխաների իրավունքների պաշտպանության և ներառական ուսուցման ոլորտներում՝

հասարակությանը երեխաների ձայնը, տեսակետները, կարծիքները հասցնելու ուղղությամբ տարվող աշխատանքներին զուգահեռ ստեղծվեց ևս մեկ խմբակ՝ լուսանկարչական, որի շնորհիվ երեխաները ոչ միայն սովորում են լուսանկարչական արվեստը, ինչպես նաև համակարգչային «Ֆոտոշոփ» ծրագիրը, այլ բազմաթիվ ցուցահանդեսներին մասնակցելով կարողանում են իրենց վերաբերմունքն արտահայտել շրջապատող աշխարհի, երևույթների, մարդկանց վարքագծի և հասարակության կյանքի տարբեր դրսևորումների մասին:

Տավուշի Տարածքային զարգացման ծրագիրը, որը ՎՎ Հայաստանի ամենամեծ SՁԾ-ն է, 2006թ. դեկտեմբերից Ազատամտի և Բերդի համայնքային կենտրոններում իրականացնում է ձեռարվեստի խմբակների նախագիծը՝ երեխաների և նրանց ծնողների մասնակցությամբ: Խմբակի նպատակն է հայտնաբերել շնորհաշատ երեխաներին և նպաստել նրանց հակումների զարգացմանը: Խմբակն ունի նաև ինտեգրատիվ բնույթ, քանի որ հնարավորություն է տալիս հատուկ կարիքներով երեխաների և համայնքի այլ երեխաների միջև ստեղծել կապեր համատեղ աշխատանքի ընթացքում, ինչը վերացնում է տարատեսակ խնդիրներ ունեցող մանուկների մեկուսացումը հասակակիցներից և հասարակությունից: Այս խմբակները նպաստում են տարբեր խնդիրներ ունեցող երեխաների ինքնահաստատմանն ու դրսևորմանը, որը խրախուսվում է տարբեր մեթոդներով՝ բարձրացնելով երեխաների ինքնագնահատումը: Պատահական չէ նաև ակտիվ և շնորհաշատ ծնողների մասնակցությունը. այն հնարավորություն է տալիս ճանաչել սեփական երեխայի իրական պոթենցիալները և գտնել դրանց լուծման ուղիները: Ծնողների պատրաստած լավագույն աշխատանքները նվիրվում են համայնքային կենտրոններին և մանկապարտեզներին, իսկ երեխաներինը՝ մերկայացվում են մարզկենտրոններում և Երևանում կազմակերպվող ցուցահանդեսներին:

Եվս մեկ անգամ ցանկանում են երախտիքի խոսքս հղել համակազմակերպիչ կողմերին և հույս հայտնել, որ այսպիսի ծրագրերը, բացի վերոնշյալ առավելություններից, վաղ թե ուշ շրջայական ռեակցիայով կանդրադառնան նաև լայն հասարակության շրջանում հատուկ կարիք ունեցող երեխաների նկատմամբ հոգածության առաջացմանը և հնարավորություն կտան վերջիններիս լավագույնս իրացնել իրենց իրավունքները:

## **Արվեստի և արհեստի ուսուցումը որպես ճգնաժամի մեջ գտնվող երեխաների աջակցության միջոց**

**Ռամոնա Կոտակյան  
ՀՕՖ-ի ԵԸԿԿ ծրագրերի ղեկավար**

Հայ Օգնության Ֆոնդի Երեխաների ընդունման և կողմնորոշման Կենտրոնում ապաստանվում են դժվար իրավիճակում հայտնված

երեխաներ՝ լքված, բռնության ենթարկված, մուրացիկ, թափառաշրջիկ, վարքային խնդիրներ ունեցող և այլ: Նրանց հետ իրականացվող մասնագիտական աշխատանքում կիրառվում են արտթերապիայի տարբեր տեխնիկաներ, մասնավորապես, արվեստի առանձին ճյուղերի՝ նկարչության, երաժշտության, թատրոնի, խեցեգործության և ստեղծագործական գործունեության այլ տարրեր, հիմնական երեք նպատակներով՝ դիագնոստիկա, թերապիա, ուսուցում:

Դիագնոստիկ նպատակներով կիրառվում է հատկապես նկարչությունը, որը հնարավորություն է տալիս գնահատել երեխային երեք ոլորտներում՝ ներքին-անհատական, միջանձնային հարաբերությունների և սոցիալական: Երեխան նկարում է այն, ինչ գիտի և ինչ կարևոր է իր համար և ոչ թե այն, ինչ տեսնում է ինչպես մեծահասակը: Երեխայի նկարի միջոցով մասնագետը կարողանում է բացահայտել, իմանալ երեխայի մտավոր զարգացման մասին, աշխարհի նկատմամբ նրա մոտեցման /էմոցիոնա՞լ, թե ռացիոնալ/, տազնապայմության, վախերի, դեպրեսիաների, ինքնակառավարման, վարքային շեղումների, ագրեսիաների, ընտանիքի և նրա անդամների միջև փոխհարաբերությունների: Քանի որ նկարները անգիտակցականի հետևանք են, հետևաբար դրանք հնարավոր են դարձնում առավել ճիշտ դիագնոստիկա և առավել նպատակային թերապիա իրականացնել: Թերապևտիկ նպատակներով նկարչական զանազան տեխնոլոգիաներ ենք օգտագործում՝ սկսած խզբզոցներից մինչև թեմատիկ նկարները: Իբրև առանձին տեխնոլոգիա կիրառվում են գույները /ախտորոշիչ, թերապևտիկ, ուսուցողական նպատակներով/:

Կավով, խմորով, պլաստիլինով աշխատանքի ժամանակ երեխային հատկապես զարմացնում ու ոգևորում է տձև նյութի ձևափոխումը որևէ իմաստալից առարկայի, երեխան գիտակցում է, որ իր ձեռքով իմաստ է ներդրում նյութի մեջ, որ ոչնչից գեղեցիկն է ստեղծում: Բացի այդ, այս աշխատանքի ընթացքում մատների մանր մոտորիկական նպաստում է երեխայի ընդհանուր զարգացմանը:

Ակնհայտ փոփոխություններ են առաջանում երեխաների մոտ՝ երաժշտության ազդեցության հետևանքով: Կենտրոնի ու նրա սաների համար գրված հատուկ երգերը երեխաները առանձնակի ջերմությամբ են երգում ու սիրում են երեկոները խմբով դրանք կատարել: Սա նպաստում է երեխաների միջև հարաբերությունների ջերմացմանը: Երեխան երգի միջոցով «խոսում է» իր ցավի մասին, իր ապրումները «դուրս է հանում», հանգստանում է:

Թատրոնի առանձին տարրերի կիրառումը Կենտրոնում սոցիալական ինքնիմացության հիանալի միջոց է ծառայում այնպիսի «հանդիսատեսի» ու «դերասանի» համար, ինչպիսին երեխան է, որ միայնակ, առանց այդպիսի «գիտափորձի» ի վիճակի չէ սեփական անձին և միջանձնային /նաև ներընտանեկան/ փոխհարաբերություններին նայել օբյեկտիվ դիտորդի սթափ հայացքով: Երեխան թատերական դերի մեջ տեսնում է այնպիսի սոցիալական դերեր, որ պարտադիր պիտի կատարվեն: Իսկ սոցիալական դերի պարագայում այդ անվերապահ կատարման ենթակա սցենարները հաճախ ոչ այլ ինչ են, քան վարքի կանոններ, իրավունքներ ու

պարտականություններ՝ տվյալ սոցիալական դերին հատուկ: Կենտրոնի մասնագետների կամ իրենց իսկ կողմից գրված սցենարներով ներկայացված բեմադրությունները երեխաների համար ինքնահասկացման, ինքնաճանաչման, ինքնիմացության ճանապարհ են բացում, անշուշտ նաև ուսուցողական նպատակ հետապնդելով:

Կարևորն այն է, որ արտօրապիլայի հնարավոր բոլոր ձևերը մեծապես զարգացնում են երեխայի ինքնարտահայտման հնարավորությունները, ստեղծում են նոր կոմունիկացիոն դաշտ երեխայի զարգացման համար: Բարձրանում է երեխայի ինքնագնահատականը, բարելավվում են երեխաների միջև փոխհարաբերությունները, երեխան շփվում է գեղեցիկի հետ, նոր գիտելիքներ ու հմտություններ է ձեռք բերում, սովորում է պլանավորել, իր առջև նպատակ դնել և գործը հասցնել նպատակին, ուրախանալ արդյունքներով. դառնում է ավելի ինքնավստահ: Շատ-շատերի մոտ թաքնված ունակություններ են բացահայտվում, որ անգամ ծնողներին անհայտ են եղել:

## **Ինքնահաստատման տանող ճանապարհ արվեստի եւ արհեստի միջոցով**

### **Կարինե Հարությունյան «Ծիծեռնակ» ՀԿ-ի գործադիր տնօրեն**

*«Եթե բեզ լքում են, չի նշանակում,  
որ դու աշխարհում միայնակ ես»  
12-ամյա Սոնայի խոսքից*

Նախ ուզում եմ ողջունել այս խիստ կարեւոր նախաձեռնությունը և իմ հիացմունքը հայտնել կարևոր խնդրի բարձրացման համար:

Արվեստը մարդու հոգեւոր կայացման համար անվիճելի անհրաժեշտություն է՝ անկախ նրա սոցիալական վիճակից: Այս համաժողովից ակնկալում եմ փորձի ու մտքերի փոխանակում, նոր գաղափարների առաջացում, որի ողջ ծանրակշռությունը կարելի կլինի գնահատել միայն կատարելիք աշխատանքի և դրա շոշափելի արդյունքների դեպքում: Ուզում եմ հավատալ, որ այս համաժողովից իմ սպասելիքները անպայման կատարվելու հեռանկար ունեն:

Կարճ ներկայացնեմ մեր կազմակերպությունը: Ստեղծվել է այն 2001-ին: 35 կանայք ենք՝ տարբեր տարիքի եւ մասնագիտության տեր: Մեր մեջ մեծամասնություն են կազմում երաժիշտները: Ունենք մասնաճյուղեր Կապանում և Բյուրականում: Շատ-շատ կամավորներ ունենք՝ կոնսերվատորիայի եւ թատերական ինստիտուտի ուսանողներ, երաժշտական դպրոցների և ուսումնարանի սաներ: Մեր կազմակերպության առաքելությունն է նպաստել հասարակության հոգևոր վերածննդին, օժանդակել մշակութային կյանքի զարգացմանը, պահպանել և հասարակությանը հասցնել արվեստի բարձր արժեքները:

Հիմնական խնդիրներից է անմիջական և մշտական կապի ստեղծումը սոցիալապես անապահով խավերի և արվեստագետների, մշակութային կոլեկտիվների միջև, մասնավորապես տուն-ինտերնատների և օժանդակ դպրոցների միջև: Դրա համար կազմակերպում ենք համերգներ, դասախոսություններ, այցելություններ տարբեր մշակութային օջախներ:

Մեր գերխնդիրն է մանկատներում և այլ հաստատություններում ապրող երեխաների ինտեգրացումը հասարակություն, որին հասնելու ուրույն եւ յուրահատուկ միջոց է բոլոր ժամանակների մեծություն արվեստը, նրա ուժը: Ձեր ուշադրությանն են ներկայացնում մեր բազմաթիվ ծրագրերից մեկը, որի նախապատմությունն սկսվեց մեր այցելությամբ Նուբարաշենի թիվ 11 մտավոր թերզարգացում ունեցող երեխաների հատուկ, «օժանդակ» դպրոց: Դա 2004-ին էր: Այդ օրվանից մինչ հիմա այնտեղ բնակվող մոտ հարյուր երեխաների տոն օրերը զարդարում ենք նվերներով ու համերգային ծրագրերի կազմակերպմամբ: Առաջին իսկ շփումներից արդեն հասկանալի էր, որ գործ ունենք փակ, մի տեսակ խռոված ներաշխարհի և դասական երաժշտություն լսելու անպատրաստ ունկնդրի հետ: Դա մեզ թելադրեց ստեղծել ծրագիր, որ հասանելի և հասկանալի կդարձնի դասական երաժշտությունը երբևէ այն չլսած երեխաների համար: Արդեն 2005 թվականին ծրագիրն իրականացավ “‘Disney hand’ միջազգային կազմակերպության դրամաշնորհով, որի արդյունքում կայացան երեք համերգ-գրույցներ «Միմֆոնիկ նվագախմբի նվագարանները» խորագրի ներքո: Շատ երեխաներ առաջին անգամ էին տեսնում և լսում թավջութակ, գալարափող, տրոմբոն: Համերգ-գրույցներից հետո երեխաներին տարանք Ալ. Սպենդիարյանի անվ. Ազգային օպերային թատրոն, որտեղ նրանք ակընդրեցին Ադանի «Ժիգել» բալետը: Պետք էր տեսնել նրանց կլանված հայացքը: Այն տպավորությունն էր, որ նրանք հայտնվել են հեքիաթում:

2006-ին Նուբարաշենի դպրոցի երեխաների համար IREX կազմակերպության հետ համատեղ կազմակերպեցինք այցելություններ Ազգային պատկերասրահ, որտեղ անցկացվեցին նաև գրույցներ գեղարվեստի մասին:

Իսկ այս տարի՝ 2007-ին արդեն մեզ համար հարազատ դարձած երեխաներին ծանոթացրեցինք թատերական արվեստին: Մեր կազմակերպության կամավոր ուսանողները երեխաներից տասներեք շնորհալիներին բեն բարձրացրեցին: Բեմականացվեց «Պոչատ աղվեսը»:

Այս միջոցառումն առիթ եղավ, որ հիմնվի շրջիկ թատերական ստուդիա «Երեխաները երեխաներին» անունով և հիմք դառնա մտավոր խնդիրներ ունեցող երեխաների թատերական կազմակերպված գործունեությանը: Արդյո՞ք սա չէ ինտեգրացում ասվածի կոնկրետ և հաջողված օրինակը:

Ասել, որ այս բոլոր միջոցառումները միայն տոն են եղել, քիչ է, դա ոգու և ոգեղենության հաղթանակ է հիվանդության, մեկուսացվածության և ծանր ճակատագրի գիտակցությամբ ապրող երեխաների համար: Նրանց կամքի հաղթանակն էր սա և ինչու չէ, նաև մեր արածի գնահատականը, որ մի

12 տարեկան աղջնակ այսպես բարձրաձայնեց. «Եթե քեզ լքում են, չի նշանակում, որ դու աշխարհում միայնակ ես»:

Մեր աշխատանքի ամենամեծ հաջողությունն են համարում ոչ միայն մտավոր և սոցիալապես անապահով երեխաներին արվեստի հմայքով գերելը, այլև կամավորներին աշխատանքի և շփման փորձով զինելը: Մեր աշխատանքը երկկողմանի էֆեկտ ունի՝ մեկ, որ երեխաներին պատում է ուշադրության և հոգատարության ալիք, երկրորդ, ոչ պակաս կարևորը, կամավորներն զգում են իրենց պրոֆեսիոնալ գործի կարևորությունը եւ իրենց նվիրումի նշանակալիությունը: Երեխաների զարգացման գործում արվեստը դառնում է անձի ձևավորման հիմնական եւ անբաժանելի բաղադրիչը, ինչպես ոսկե բանալին, որ բացում է նրանց տխուր հոգիների փակ դռները

### **«Ավանդական կիրառական արվեստի, տարբեր հմտությունների և կարողությունների ուսուցում» ծրագրի ամփոփիչ սեմինար**

Սեմինարի նպատակն էր ամփոփել Երևանի և ՀՀ 4 մարզերի արհեստագործական ուսումնարանների և արվեստի դպրոցների հիմքի վրա անցկացված երկշաբաթյա փորձնական դասընթացների արդյունքները, պարզել նրանց ուժեղ և թույլ կողմերը, նշել նրանց հետագա կիրառման հնարավորությունները, քննարկել արված առաջարկությունները:

Ամփոփիչ սեմինարի ընթացքում հաշվետու զեկույցներով հանդես եկան «Ավանդական կիրառական արվեստի, տարբեր հմտությունների և կարողությունների ուսուցում» ծրագրում ընդգրկված մարզերի համակարգողները, որոնք ներկայացրեցին երկշաբաթյա դասընթացների ընթացքում իրենց կողմից արված դիտարկումները, ինչն էլ դարձավ սեմինարի քննարկման հիմնական առարկան:

Ծրագրի սոցիոլոգը, որը ծրագրի ողջ ընթացքում իրականացրել էր սոցիոլոգիական հարցումներ, հանդես եկավ հաշվետու զեկույցով, ներկայացրեց իր հետազոտության արդյունքներն ու արված վերլուծությունները:

Արվեստի դպրոցների և ուսումնարանի տնօրենները, փորձագետները, ծրագրին մասնակից աշակերտները և նրանց ծնողներն իրենց ելույթներում նշեցին ծրագրի արդյունավետության և կարևորության մասին: Աշակերտների ծնողները հատկապես մեծ ոգևորությամբ էին խոսում իրենց երեխաների վարքագծում այդ կարճ ժամանակահատվածում տեղի ունեցած ակնհայտ փոփոխության մասին:

## Հաշվետու զեկույց

### Արմինե Պողոսյան *Երևան քաղաքում ծրագրի համակարգող*

Համաժողովի հարգելի մասնակիցներ,

ՅՈՒՆԵՍԿՕ-ի և «Ապագան քունն է» բարեգործական սոցիալական հասարակական կազմակերպության կողմից 2007 թվականի հունիս ամսին սկսվեց «Ավանդական կիրառական արվեստի տարբեր հմտությունների և կարողությունների ուսուցում» ծրագիրը, որի նպատակն էր արվեստի և արհեստի միջոցով նախ կրթել երեխաներին, իսկ հետո սեր արթնացնել արվեստի կամ արհեստի որևէ ճյուղի նկատմամբ, տալ հմտությունների և կարողությունների այնպիսի պաշար, ինչը թույլ կտա նրան հետագայում ձեռք բերել ֆինանսական անկախություն և քիչ թե շատ օգնել սեփական ընտանիքին: Ծրագրում ընդգրկված էին սոցիալապես անապահով, հատուկ կարիք ունեցող և մտավոր թույլ կարողություններով երեխաներ:

Ծրագիրն առավել արդյունավետ իրականացնելու նպատակով՝ հանդիպեցինք Հայաստանի Հանրապետության Մշակույթի, Կրթության և Գիտության, Աշխատանքի և Սոցիալական հարցերով զբաղվող նախարարությունների աշխատակիցներին: Նախապես ձեռք բերված վերը նշված նախարարությունների հետ համագործակցությունը տվեց իր արդյունքը:

Մշակույթի նախարարությունում տիկին Լյուդմիլա Մելիքյանը առաջարկեց ծրագիրն իրականացնել Երևանի Հայկանուշ Դանիելյանի անվան արվեստի դպրոցում: Կրթության և Գիտության նախարարության նախնական և միջին մասնագիտական կրթության վարչության պետ՝ Արտակ Աղբալյանն էլ մեզ ուղղորդեց Երևանի թիվ 2 արհեստագործական ուսումնարան:

Հանդիպեցինք նշված ուսումնական հաստատությունների տնօրենների հետ և ներկայացրեցինք ծրագիրը: Նրանք մեծ պատրաստակամությամբ համաձայնեցին և աջակցեցին իրենց ուսումնական հաստատություններում ծրագրի լիարժեք իրականացմանը:

Երևանի թիվ 2 ուսումնարանի տնօրեն Պարույր Մանթոսյանի հետ քննարկվեց և որոշվեց ընտրել արհեստի ճյուղերից խոհարարությունը, մրցույթում ընտրված լավագույն խոհարար Ալվարդ Մանուկյանի կազմած երկչաբաթյա պլանն ուներ իր հստակ նպատակը՝ երեխաների մեջ հետաքրքրություն առաջացնել դեպի խոհարարությունը, ծանոթացնել խոհարարության գաղտնիքների, խոհարարի մասնագիտության հետ: Յուրաքանչյուր հանդիպման ժամանակ երեխաներին տրվում էր տեսական գիտելիքներ և անցկացվում գործնական պարապմունք:

Երևանի Հայկանուշ Դանիելյանի անվան արվեստի դպրոցի տնօրեն Գեորգի Հախնազարյանի հետ որոշվեց և ընտրվեց արվեստի ճյուղերից ուլունքագործությունը և բատիկան /նկարչություն կտորի վրա/: Նախապես մրցույթի միջոցով ընտրված փորձագետ Դիանա Կարապետյանի կողմից



մշակված երկշաբաթյա պլանն ուներ հստակ նպատակը, որն էր մասնակից երեխաների մեջ սեր արթնացնել արվեստի այդ ճյուղերի նկատմամբ, հանդիպումների ժամանակ երեխաներին ծանոթացնել դեկորատիվ արվեստի տեսակների հետ, հաղորդել պարզ կատարողական հմտություններ, որոնք երեխաներին կօգնեն հետագա մասնագիտական կողմնորոշման, ինչպես նաև ընտանիքին որոշակիորեն օգնություն ցուցաբերելու հարցում:

Երեխաների ընտրությունը կատարվել է փոքրիկ մրցույթի ձևով: Երեխաների ընտրության հարցում իր աջակցությունն է ցուցաբերել «SOS մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամը:

Խոհարարական խմբակին մասնակցում էին թվով 10, իսկ ուլունքագործության և բատիկի խմբակին՝ 15 երեխա՝ ընդհանուր առմամբ 25 երեխա: Արվեստի ճյուղերն ընտրելիս, ինչպես նաև դասընթացները կազմակերպելիս հաշվի են առնվել երեխաների նախասիրությունները և տարիքային առանձնահատկությունները:

Դասընթացի ավարտից հետո կազմակերպվեցին նաև էքսկուրսիաներ, որը օգնեց երեխաներին ավելի կապվել արվեստի հետ և հասկանալ նրա նշանակությունը: Երեխաները այդ ընթացքում նաև հասկացան, թե իրենց սովորած դեկորատիվ-կիրառական արվեստի ու արհեստի հմտությունները ինչպես և որտեղ կարող են գործածել:

Երեխաները բոլոր հանդիպումներին մասնակցում էին մեծ սիրով և ոգևորությամբ: Ծրագրի արդյունավետության մասին են վկայում նաև խմբակներին մասնակից երեխաների ծնողները, որոնք իրենց շնորհակալությունն ու գոհունակությունն էին հայտնում նման դասընթացների կազմակերպման համար: Ծրագրին մասնակից երեխաներից մեկի ծնողը փաստում է. «Իմ երեխան ոչ միայն կարողացավ ձեռք բերել որոշակի հմտություններ, այլ նաև կարողացավ հասկանալ թե ինչ է արվեստն ու արհեստը, կարողացավ գնահատել այն»:

Մեր համատեղ աշխատանքի արդյունքները այսօր ներկայացվեցին ցուցահանդեսում: Դրանք փաստում են, որ մենք կարողացել ենք լուծել մեր առջև դրված խնդիրները:

Ամբողջ ծրագիրը ամփոփելով կարող ենք ասել, որ արվեստի և արհեստի միջոցով կրթելն ու ամենակարևորը դաստիարակելը լավագույն միջոցներից մեկն է. այն օգնում է երեխաներին զերծ մնալ շատ արատավոր և բացասական երևույթներից:

Անմիջականորեն մասնակցելով յուրաքանչյուր հանդիպմանը կարող ենք ասել, որ այդ կարճ, բայց բովանդակալից ժամանակահատվածում ակնառու էր երեխաների մոտ կատարված փոփոխությունները: Ականատեսը լինելով դրան՝ առաջարկում են, որ ինչքան կարող ենք պետք է մեր երեխաներին մոտ պահենք արվեստին, որովհետև դա ոչ միայն տալիս է որոշակի հմտություններ, այլ նաև ամրապնդում է մարդկային հատկանիշները: Եկեք գնահատենք արվեստը, հասկանաք նրա կարևոր նշանակությունը մեր երեխաների ճիշտ զարգացման համար, հասկանանք, թե ինչքան կարևոր է երեխաներին դաստիարակել արվեստի ու արհեստի միջոցով, և այն երեխաներին, որոնք իրոք ունեն դրա կարիքը:

Մեր ցուցահանդեսում ներկայացված նմուշները, ցույց են տալիս մնան ծրագրերի արդյունավետությունը և ցանկալի է, որ մնան ծրագրերը շարունակական լինեն:

## **Հաշվետու զեկույց**

### **Թեհմինե Կարախանյան Արարատի մարզում ծրագրի համակարգող**

2007 թ.ի հունիսի մեկից «Ավանդական կիրառական արվեստի, տարբեր հմտությունների ու կարողությունների ուսուցում» ծրագրում աշխատում են որպես Արարատի մարզում ծրագրի համակարգող:

Ծրագրի իրականացումը սկսել են Արարատի մարզի մարզպետարանի աշխատակազմի կրթության բաժնի և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի վարիչներ պարոն Մազմանյանի և պարոն Պողոսյանի հետ հանդիպումով: Հանդիպման ընթացքում, հաշվի առնելով Մասիս քաղաքում «Մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի» առկայությունը, որոշվեց ծրագիրն իրականացնել Մասիս քաղաքում: Մասիսի քաղաքապետ պարոն Հակոբյանի, փոխքաղաքապետ պարոն Հովհաննիսյանի և քաղաքապետարանի առողջապահության, սոցիալական ապահովության և մշակույթի բաժնի պետ տիկին Ջաքարյանի հետ հանդիպելուց հետո սկսվեցին դասընթացների նախապատրաստական աշխատանքները: Տեղի ունեցավ հանդիպում Մասիս քաղաքի «Մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի» տնօրեն պարոն Հարությունյանի և կենտրոնի աշխատակազմի հետ, որոնց կողմից ներկայացվեցին կենտրոնում գործող խմբակները: Հաշվի առնելով մասնագիտությունների արդիականությունը և հետագայում դրանց կիրառման լայն հնարավորությունները՝ առանձնացվեցին տիկնիկագործության, դիզայներական աշխատանքների, խոհարարության, կարուճկի և նկարչության խմբակները: Խմբակներում երեխաների ընդգրկվելու հարցում աջակցեցին քաղաքապետարանի սոցապ, առողջապահության և մշակույթի բաժինները, որոնց ներկայացրած սոցիալապես անապահով ընտանիքներից և ֆիզիկական ու թեթև մտավոր հաշմանդամություն ունեցող երեխաներից էլ կատարվեց ընտրությունը: Հրավիրված երեխաների հետ անցկացվեց հարցազրույց, որի ընթացքում ներկայացվեց ծրագիրն ու առաջարկվող մասնագիտությունները: Արդյունքում «Տիկնիկագործություն և փափուկ խաղալիքներ» խմբակում ընդգրկվեց 8 և «Ասեղնագործություն և դիզայներական աշխատանքներ» խմբակում՝ 19 երեխա, այսպիսով՝ Մասիս քաղաքից և հարակից գյուղերից ծրագրում ընդգրկվեց ընդամենը 27 երեխա:

Չևավորված խմբակներում դասընթացները վարելու համար հայտարարված մրցույթում հաղթեցին փորձագետներ Կարինե Կարապետյանը («Տիկնիկագործություն և փափուկ խաղալիքներ») և Սուսաննա Թունանյանը («Ասեղնագործություն և դիզայներական

աշխատանքներ»): Վերջիններիս ներկայացրած երկշաբաթյա դասընթացի վարմանն այլանը լիովին բավարարում էր ծրագրում առաջադրված պայմաններին, այն է՝ ձևավորել երեխաների մոտ ընտրված արվեստի կամ արհեստի ճյուղում անհրաժեշտ հմտություններ և կարողություններ և ուսուցողական գրույցների միջոցով սեր արթնացնել նրանց մոտ դեպի մշակույթը:

Պարապմունքների ընթացքում մասնակիցները ցուցաբերում էին շատ մեծ հետաքրքրություն, որն էլ նպաստում էր դասավանդող նյութի արագ յուրացմանը:

Ծրագիրը մեծ հետաքրքրություն առաջացրեց նաև խմբակներում ընդգրկված երեխաների հարազատների շրջանում, որի վկայությունն էր նրանց մշտական մասնակցությունը պարապմունքներին:

Ծնողներից շատերը փաստում էին, որ այս դասընթացները և ծրագրի ընթացքում կազմակերպված մշակութային և ճանաչողական այցերն էական նշանակություն ունեցան իրենց երեխաների մասնագիտական կողմնորոշման հարցում:

Մշակութային այցի ընթացքում երեխաները եղան «Մանկան» փափուկ խաղալիքների արտադրամասում, ծանոթացան խաղալիքների արտադրման գործընթացին: «Թորոս Ռոսլինի» անվան ինստիտուտում և Հայաստանի Ժողովրդական արվեստի թանգարանում երեխաները ծանոթացան ժամանակակից ստեղծագործողների աշխատանքներին, որը նրանց օգնեց ևս մեկ անգամ ամրապնդել իրենց կատարած գործի նկատմամբ հավատը:

Այսպիսով որևէ մշակութային խմբակում երբևէ չընդգրկված երեխաներից շատերը հաստատակամորեն որոշում կայացրեցին շարունակել իրենց հմտությունների և կարողությունների զարգացումը՝ դառնալով «Մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի» սան:

Ահա թե ինչու եմ կարևորում պատշաճ ուշադրություն դարձնելը բոլոր այն հաստատություններին, որտեղ աճող սերունդը կարող է հաղորդակից լինել մշակույթին և ստանալ մշակութային դաստիարակություն, քանզի միայն տալով վերջիններիս մասնագիտական ուղղվածություն, ապահովելով նրանց զբաղվածությունը և անմիջական կապն արվեստի հետ, մենք կարող ենք վստահ լինել նրանց քաղաքացիական գիտակցության ձևավորման հարցում, որն ի վերջո կնպաստի մեր երկրում քաղաքացիական հասարակության կայացմանը:

## **Հաշվետու զեկույց**

### **Քնարիկ Գևորգյան**

#### ***Կոտայքի մարզում ծրագրի համակարգող***

«Ավանդական կիրառական արվեստի տարբեր հմտությունների և կարողությունների ուսուցում» ծրագիրն իրականացվել է նաև ՀՀ Կոտայքի մարզում: Ծրագրի շրջանակներում կայացան մի քանի կարևոր հանդիպումներ ՀՀ Կոտայքի մարզպետարանի կրթության վարչության պետ

պարոն Արա Միմոնյանի, Աբովյանի քաղաքապետի առաջին օգնական պարոն Մանուկ Հակոբյանի, կրթության վարչության պետ Կարինե Կիրակոսյանի հետ ծրագրին աջակցելու նպատակով: Հանդիպումների ընթացքում ներկայացվեց ծրագիրը, ողջունվեց համագործակցության նպատակով և այն իրականացնելու համար տրամադրվեց Աբովյանի Գեղարվեստի դպրոցը:

Ծրագրի նպատակն էր սոցիալապես անապահով, հատուկ կարիքներով և մտավոր թույլ կարողություններով երեխաներին թվով 30 երեխայի լիարժեք ներգրավվածություն ծրագրին: Այս հարցում մեզ աջակցեցին դպրոցի տնօրինությունը և կրթության վարչությունը: Երեխաների ընտրությունը կատարվեց հարցազրույցի միջոցով, հարցազրույցին մասնակցում էին 38 երեխա: Այնքան մեծ էր հետաքրքրությունը և ցանկությունը մասնակիցը դառնալ այս դասընթացին, որ հարցազրույցին մասնակից բոլոր երեխաները ներգրավվեցին ծրագրում:

Հիմք ընդունելով սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքները, դպրոցի պայմանները, երեխաների նախասիրությունները, ընտրվեցին առաջարկված դեկորատիվ-կիրառական արվեստի հինգ ոլորտներից երկուսը՝ «Մաքրամե», «Խեցեգործություն»: Նախապես ընտրված փորձագետները, ովքեր դասավանդում էին տեղի գեղարվեստի դպրոցում. Օվսաննա Առուստամյանը՝ մաքրամե և Անի Բաղդասարյանը՝ խեցեգործություն: Նրանց կողմից ներկայացվեց երկշաբաթյա դասընթացի պլան:

«Մաքրամե»-ի երկշաբաթյա դասընթացի նպատակն է. զարգացնել երեխաների ունակությունները, հմտություններն ու կարողությունները ավանդական կիրառական արվեստի «այս» տեսակում, նպաստել նրանց գեղագիտական ճաշակի և ստեղծագործական մտքի ձևավորմանը, սեր արթնացնելով դեպի արվեստը, հանդիպումների ընթացքում ունկնդրելով երաժշտություն:

«Խեցեգործության» երկշաբաթյա դասընթացի նպատակը. երեխաների մոտ ձևավորել որոշակի կարողություններ, հմտություններ, նպաստել նրանց գեղագիտական ճաշակի ձևավորմանը, սեր և հետաքրքրություն արթնացրին դեպի արվեստ, նպաստելով նրանց հետագա մասնագիտական ճիշտ կողմնորոշմանը: Հանդիպումների ընթացքում երեխաներին սովորեցնել նկարել էսքիզներ, մշակել կավ, այնուհետ պատրաստել կավե կենցաղային առարկաներ, թրծել և ներկել: Ծանոթացնել երեխաներին հայկական մշակույթում և կենցաղում բրուտագործության դերի և կիրառման մասին:

Տրամադրվեցին անհրաժեշտ նյութերը դասընթացի լիարժեք կազմակերպման համար:

Քանի որ արդեն ընտրված էր թիրախ լսարանը, կային բոլոր պայմանները դասընթացը իրականացնելու համար հունիսի 14-ին դասընթացը սկսված էր: Խմբակներից յուրաքանչյուր ընդգրկված էին 19 երեխա:

Դասընթացի ամբողջ ընթացքին ներկա գտնվելով կարող եմ ասել որ, արվեստը պետք է զգալ, այլ ոչ թե հասկանալ: Մասնակից երեխաները զգալով արվեստի շունչը, այս կարճ ժամանակահատվածում կարողացան յուրացնել և տիրապետել մաքրամեծի, խեցեգործության գաղտնիքները: Հանդիպումների ընթացքում նրանց տրվում էին և՛ տեսական, և՛ գործնական գիտելիքներ: Նրանք ծանոթացան Հայկական արվեստի հարուստ մշակույթին: Օրեցօր մեծանում էր հետաքրքրությունը դասընթացների նկատմամբ դա փաստում է, այն որ երեխաները ժամ առաջ գալիս էին դպրոց և ամենահետաքրքիրը այն էր, որ երեխաները այդ ընթացքում գրուցում էին արվեստի մյուս ճյուղերից գրականությունից, կինոյից: Երեխաներին տրված էր լիարժեք ստեղծագործելու բոլոր հնարավորությունները: Երեխաների աշխատանքում այնքան մեծ սեր և հոգի է դրված որ դրանցից յուրաքանչյուրը արվեստի մեծ գործ է, նրանք նույնիսկ իրենց աշխատանքներին անուններ էին տալիս: Արվեստի մեծ գործերում, ինչպես մարդկային բոլոր գործերում վճռորոշ դերը բովանդակությանն է, այլ ոչ թե չափերինը, ձևերինը, կատարման տեխնիկայինը: Դասընթացի ժամանակ հաճախակի հանդիպումների, գրույցների ընթացքում մասնակից երեխաների ծնողները, նշում էին որ իրենց երեխաների և վարքագծում, և աշխարհընկալման հարցում մեծ և դրական փոփոխություն է նկատվում, նրանք իրենց շրջապատում արդեն իսկ տեսնում են միայն գեղեցիկը: Աղամյան Արմենի մայրը նշում է, որ իր որդին գլխի ի վայր փոխվել է, քանի որ նա ուներ ուշադրության կենտրոնացման խնդրի, կարծես թե կավի հետ աշխատելիս նա դարձել է ավելի ուշադիր:

Դասընթացի ավարտին Բրիտանական Խորհրդի աջակցությամբ երեխաները մշակութային գործնական այցով եղան Երևանում, այցելեցին «Մանե Թայլս» ձեռակերտ սալիկների գործարան, որտեղ երեխաները ծանոթացան ինտերիերի ձևավորման մեջ խեցեգործության կիրառությունը: Ռոսլինի անվան ինստիտուտում, որտեղ դիտեցին ուսանողների ձեռքի աշխատանքները, մաքրամեծի հյուսքից պատրաստված ջահեր և այլ կենցաղային իրեր:

Եթե ուզում ես արվեստից հաճույք ստանալ, ապա պետք է լինես գեղագիտորեն կրթված: Կրթված հասարակություն ունենալու համար պետք է նրա սեփականությունը դարձնել հնադարի այն գեղագիտական ուսմունքները, որոնք առավելագույնս են ապահովում իր սերնդի գաղափարական պահանջները:

Ընտրիակալություն եմ հայտնում Աբովյան քաղաքի քաղաքապետարանի կրթության վարչությանը, դպրոցի տնօրեն պարոն Արիս Կարապետյանին, փորձագետներին դասընթացն հիանալի կազմակերպելու, անցկացնելու համար:

**«Ավանդական կիրառական արվեստի, տարբեր հմտությունների  
և կարողությունների ուսուցում» ծրագրի շրջանակներում  
իրականացված սոցիոլոգիական հետազոտություն**

**Հակոբ Մաթևոսյան  
Ծրագրի սոցիոլոգ**

**«Ավանդական կիրառական արվեստի, տարբեր հմտությունների և  
կարողությունների ուսուցում»** ծրագրին հինգ տարածաշրջաններից  
մասնակցել է 130 երեխա, որից

- 38 երեխա Աբովյանից, 29.3%
- 27 երեխա Մասիսից, 20.7%
- 22 երեխա Երևանից, 17 %
- 19 երեխա Ագատանուտից, 14.6%
- 13 երեխա Բերդից, 10%
- 11 երեխա Գյումրիից, 8.4%

Ի սկզբանե նախատեսված էր, որ ծրագրին պետք է մասնակցեն  
սոցիալապես անապահով և հատուկ կարիք ունեցող երեխաները:

Ծրագրին մասնակցած երեխաների թիվն ըստ խնդիրների հետևյալն է  
արքատություն

- սոցիալապես անապահով 72 երեխա, 55,3%

հատուկ խնդիր ունեցողներ

- թեթև մտավոր հետամնացություն 6, 5%
- թույլ լսող 2, 1.4%
- ֆիզիկական հաշմանդամություն 22, 17%
- վատ տեսնող 3, 2.2%
- մանկական ուղեղային կաթված 1, 0.7 %
- հոգեբանական դժվարություններ (վախի զգացում) 1, 0.7%

ընտանեկան կարգավիճակ

- միակողմանի ծնողազուրկ 12 երեխա, 9,3%
- բազմազավակ ընտանիքի 6 երեխա, 4,6%

առանց հատուկ խնդիրների

- 5 երեխա, 3.8%

**«Ավանդական կիրառական արվեստի, տարբեր հմտությունների և  
կարողությունների ուսուցում»** ծրագրի շրջանակներում իրականացվել է  
սոցիոլոգիական հետազոտություն, որի հիմնական նպատակն էր պարզել  
իրականացված ծրագրի արդյունավետությունը՝ մեր առջև դնելով հետևյալ  
խնդիրները.

- պարզել ծնողների, խմբակավարների, արվեստի դպրոցների և  
ուսումնարանի տնօրենների վերաբերմունքը երեխաների ընտրած  
արվեստի/արհեստի ճյուղի վերաբերյալ
- պարզել իրականացված ծրագրի արդյունքների հեռանկարային  
կողմը

- պարզել ծրագրի դաստիարակչական ազդեցությունը
- Վերը նշված խնդիրները պարզելու համար կիրառվել են սոցիոլոգիական հետազոտության երկու մեթոդ.
- խորին հարցազրույցի մեթոդ, որն իրականացվել է արվեստի դպրոցների և ուսումնարանի տնօրենների, ինչպես նաև խմբակավարների հետ
- Ֆոկուս խմբերի մեթոդ, որն իրականացվել է խմբակներում ընդգրկված երեխաների ծնողների հետ
- Ծրագրի շրջանակներում ընտրվել են և՛ պահանջարկ վայելող, տարածված ճյուղեր, և՛ փոքր-ինչ ուշադրությունից դուրս մնացած, սակայն կարևորությունը չկորցրած արհեստի/արվեստի ճյուղերը: Ծրագրում ընդգրկվել են արվեստի/ արհեստի հետևյալ ճյուղերը.
- Խոհարարություն և դիզայն 9 երեխա, 7%
- Ուլունքագործություն և բատիկա 13 երեխա, 10%
- Դիզայն և ասեղնագործություն 38 երեխա, 29%
- Տիկնիկագործություն և փափուկ խաղալիքների պատրաստում 27 երեխա, 21%
- Խեցեգործություն 19 երեխա, 14.5%
- Մաքրամեն 19 երեխա, 14.5%
- Ֆոտո 5 երեխա, 4%

Արվեստի/արհեստի վերը նշված ճյուղերը տվյալ տարածաշրջաններում ունեն գարգացման մեծ հեռանկարներ, իսկ վերջինս հիմք է հանդիսանում հետագայում երեխայի զբաղվածության ապահովման համար:

Արվեստի/արհեստի այս կամ այն ճյուղի ընտրությունը կատարվել է նաև ըստ երեխաների նախասիրությունների:

Ընտրված ոլորտների արդիականությունը և կարևորությունը ևս մեկ անգամ վկայում են հետազոտության արդյունքների վերլուծությունը: Ըստ ուսումնարանի տնօրենի և խմբակավարի՝ խոհարարության արդիականությունը և կարևորությունը պայմանավորված է սպասարկման ոլորտի հիմնական, անբաժանելի մաս լինելու հետ, իսկ վերջինիս տարածումը կապված է մեր երկրում տուրիզմի գարգացման հետ:

Ինչ վերաբերվում է ուլունքագործությանը, ապա դրա արդիականությունն, ըստ համապատասխան խմբակում ընդգրկված երեխաների ծնողների, ներկա պայմաններում կապված է նրա հետ, որ նորածնության ոլորտում ավելի բարձր են գնահատվում կիսաթանկարժեք և ոչ թանկարժեք իրերը:

Չնայած տիկնիկագործության ոչ մեծ պահանջարկին, ինչպես նշում են հարցվողները, այն ունի մեծ կարևորություն երեխաների դաստիարակության հարցում:

Դիզայնի և ասեղնագործության արդիականությունը պայմանավորված է նրանով, որ ներկա ժամանակաշրջանում գնահատվում է

գեղեցիկը, և ըստ հարցվողների, գեղեցիկը գնահատելի է ոչ միայն արվեստի ոլորտում, այլ նաև կյանքի բոլոր բնագավառներում:

Ըստ արվեստի դպրոցի տնօրենի՝ խեցեգործությունը այժմ դինամիկորեն զարգացող ոլորտ է՝ հաշվի առնելով թեկուզ միայն այն հանգամանքը, որ պահանջարկ կա սպասարկման ոլորտում՝ կապված խեցուց պատրաստված սպասքի հետ և իհարկե էքստերիերի և ինտերիերի կահավորման համար:

Ինչ վերաբերում է մաքրամեխ, ապա այս խմբակում ընդգրկված երեխաների ծնողների հավաստմամբ, մաքրամեխ նորարարական, միևնույն ժամանակ աչքի համար հաճելի զբաղմունք է: Ըստ խմբակավարի՝ մաքրամեխ պատրաստված իրերը միանշանակորեն կիրառելի են թե՛ կենցաղում, թե՛ նորաձևության մեջ:

Համաձայն հետազոտության արդյունքների պահանջարկ կա արվեստի և արհեստի միայն որոշակի ճյուղերի նկատմամբ: Այդ ճյուղերն են

- ադամանդագործություն
- ոսկերչություն
- խոհարարություն
- վարսավիրություն
- նկարչություն
- շինարարություն

Ընդհանուր առմամբ հարցվողների գերակշռող մասը կարծում է, որ մեծ պահանջարկ ունի դեկորատիվ - կիրառական արվեստը:

Հետազոտության արդյունքների վերլուծությունից ելնելով՝ կարելի է ասել, որ ինչպես արվեստի դպրոցների, ուսումնարանի տնօրենների, խմբակավարների, այնպես էլ ծնողների համար արվեստը և արհեստը շատ մեծ նշանակություն ունեն. նրանք արվեստը համարում են հոգևոր սնունդ, դաստիարակության, գեղագիտական ճաշակ ձևավորելու միջոց, հետազայում աշխատանք ունենալու հնարավորություն, ինչպես նաև դեպի կատարելության հասնելու ճանապարհ:

Սակայն այսօր արվեստ ու արհեստ ուսուցանող հաստատությունների նկատմամբ հետաքրքրությունը, պահանջարկը պակասել է՝ ի համեմատ Խորհրդային Միության ժամանակների, որի պատճառներն ըստ հետազոտության արդյունքների հետևյալն են. նախ շատ մեծ է հետաքրքրությունը բուհերի նկատմամբ, որին նպաստել են նաև մասնավոր բուհերի լայն տարածումը: Հարկ է նշել նաև այն հանգամանքը, որ վերջիններս որոշակի իմաստով (չհաշված ֆինանսական կողմը) հեշտացրել են բուհական համակարգում ընդգրկվելը: Բացի դրանից այսօր հասարակության համար կարևոր արժեք է համարվում բարձրագույն կրթությունը, և աշխատաշուկայում առաջնային տեղ է տրվում բարձրագույն կրթությանը, այլ ոչ միջին մասնագիտականին: Ըստ խմբակավարների՝ Հայաստանում արվեստի և արհեստի նկատմամբ հետաքրքրության պակասը նաև պայմանավորված է նրանով, որ հիմնականում աչքաթող է արված այս ոլորտների աշխատուժը:



Այս ամենը նպաստում է հասարակության մեջ այն տեսակետի ձևավորմանը, որ այդ հաստատություններում սովորողները մրցունակ մասնագետներ չեն այսօրվա շուկայի համար: Սակայն ինչ վերաբերվում է ծրագրին մասնակցած երեխաների ծնողներին, ապա ըստ նրանց այդ հաստատությունները մեծ հնարավորություն են տալիս իրենց երեխաներին ձեռք բերելու հմտություններ հետագայում աշխատանք ունենալու համար՝ հաշվի առնելով իրենց սեփական հնարավորությունները՝ սոցիալական կարգավիճակը և հատուկ կարիք ունենալը:

Միևնույն ժամանակ ինչպես ըստ հաստատությունների տնօրենների, խմբակավարների, այնպես էլ ըստ ծնողների բարձրագույն կրթություն ունենալը և արվեստով կամ արհեստով զբաղվելը համարժեք նշանակություն ունեն մարդու համար:

*«... սրանք պարտադիր գիտելիքներ են բոլոր մարդկանց համար՝ անկախ հասարակության մեջ զբաղեցրած դիրքից, բարձրագույն կրթությունից...»*

*ըստ ծրագրին մասնակցած երեխայի ծնողի*

Ստացվում է, որ հասարակության ոչ մեծ, սակայն կայուն մի շերտ հանդիսանում է տվյալ հաստատությունների պոտենցիալ «սպառողը»:

Չնայած այս ամենին՝ արվեստը/արհեստը ունեն դաստիարակչական շատ մեծ նշանակություն երեխաների համար:

Ըստ հետազոտության արդյունքների՝ գերիշխող է այն տեսակետը, որ արվեստի հետ առնչվող մարդիկ՝ լինի թե՛ սիրողական մակարդակում, թե՛ պրոֆեսիոնալ, օժտված են մարդկային բարձր որակներով: Այն նպաստում է մտածելակերպի փոփոխությանը դրական իմաստով, ինչպես նաև ձևավորում է բարձր ճաշակ, բարոյական բարձր արժեքներ, կրթում է մարդուն՝ դարձնելով հասարակության պիտանի անդամ, միևնույն ժամանակ կանխում է երկար ժամանակ փողոցում գտնվելը և վերջինիս բացասական ազդեցությունը երեխայի վրա:

*«...արվեստը շատ զգայուն է, դրա համար պետք է մարդու կողմից ամեն ինչ ներդրվի, քանի որ այն բարձրացնում է մարդուն՝ դարձնելով ավելի լավը, ավելի բարի...»*

*մեջբերումն ըստ ծրագրին մասնակցած երեխայի ծնողի*

Այն հարցին, թե նմանատիպ ծրագրերը ինչ նշանակություն ունեն արվեստի և արհեստի ուսումնական հաստատությունների համար, ապա ըստ հարցվողների հիմնական մասի՝ այդպիսի միջոցառումները ընդլայնում են վերը նշված հաստատությունների սաների թիվը:

*«...մինչ այս ծրագրի իրականացումը մենք տեղյակ չէինք այսպիսի հաստատությունների տեղի և դերի մասին...»*

*մեջբերումն ըստ ծրագրին մասնակցած երեխայի ծնողի*

Ջբաղվածության տեսանկյունից այս երկշաբաթյա դասընթացներն ապահովել են երեխաների զբաղմունքը ոչ միայն հաստատություններում, այլ նաև տանը: Եվ ըստ ծնողների՝ երեխաների կողմից իրականացվել է մմանատիպ միջոցառումների պրոպագանդա, իրենց ընկերներին տեղեկացնելով վերջիններիս մասին և նրանց ևս ընդգրկելով աշխատանքային գործընթացում:

Դասընթացների ազդեցությունը մեծ է եղել նաև երեխաների վարքային փոփոխության հարցում:

*«...այս երկշաբաթյա դասընթացները շրջադարձային եղան երեխաների կյանքում, նրանք հասկացան, որ իրենք էլ կարող են գեղեցիկ իրեր պատրաստել և հիացնել շրջապատին...»*

*մեջբերումն ըստ ծրագրին  
մասնակցած երեխայի ծնողի*

Նմանատիպ ծրագրերը կարևոր նշանակություն ունեն տարածաշրջանների համար: Հեռու լինելով մայրաքաղաքից՝ ծայրամասերի և շրջանների երեխաները ավելի օտարված են ամեն տեսակի, այդ թվում մշակութային կենտրոններից, ինչը ըստ երեխաների ծնողների խոչընդոտում է մշակույթով դաստիարակվելուն: Տարածաշրջանի համար մեկ այլ տեսանկյունից կարող է կարևոր նշանակություն ունենալ, նմանատիպ միջոցառումները խթան են հանդիսանում մասնագիտական կողմնորոշման համար՝ ապահովվելով երեխաների հետագա աշխատանքային հեռանկարները իրենց իսկ տարածաշրջաններում, իսկ վերջինս էլ նպաստում է արտագաղթի նվազեցմանը, ինչպես նաև աջակցում է կառավարության կողմից իրականացվող աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրին:

Կա նաև այն տեսակետը, ըստ որի արվեստի և արհեստի ուժը այնքան մեծ է, որ դա պետք է լինի կրթական գործընթացի բաղկացուցիչ մաս, քանի որ այն ունի մեծ գործառնական նշանակություն:

Բոլոր հարցվողները միանշանակորեն կարևորում են նմանատիպ միջոցառումների անցկացումը, և ինչպես հաստատությունները, այնպես էլ երեխաների ծնողները պատրաստակամություն են հայտնել աջակցել նմանատիպ միջոցառումներին՝ հստակ ընդգծելով դրանց կարևոր նշանակությունը:

Ստորև բերվում են հարցվողների առաջարկություններ

- առաջարկվել է իրականացնել հետազոտություններ շուկայի ոլորտում մասնագիտությունների պահանջարկի վերաբերյալ, և պատրաստել համապատասխան մասնագետներ:

*«...թո՛ղ ասեն՝ ինչ մասնագետ է պետք, իսկ մենք պատրաստենք...»  
մեջբերումն ըստ ուսումնարանի տնօրենի*

- արվեստի և արհեստի զարգացումը հնարավոր է, եթե արհեստի և արվեստի ուսումնական հաստատությունների և այլ ոլորտների ինստիտուտների (ապագա գործատու) միջև լինի համագործակցություն:

առաջարկվում է հնարավորինս երկարեցնել դասընթացների տևողությունը՝ հնարավոր դարձնելով ուսուցումը նաև ամռան ամիսներին:

## **Կարծիքներ և առաջարկություններ դասընթացների վերաբերյալ**

**Իրինա Սադոյան**  
*«Փրկեք երեխաներին» կազմակերպության  
հայաստանյան գրասենյակի տնօրեն*

Ծանոթանալով «Ապագան քոնն է» բարեգործական սոցիալական հասարակական կազմակերպության՝ «Ավանդական կիրառական արվեստի, տարբեր հմտությունների և կարողությունների ուսուցում» կարճաժամկետ ծրագրին՝ կարծում եմ, որ այն կարող է կարևոր նշանակություն ունենալ երեխաների համար:

Ծրագրի շրջանակներում տասնյակ սոցիալապես անապահով, ծնողագուրկ և հաշմանդամ երեխաների հնարավորություն է ընձեռվել անվճար հիմունքներով մասնակցելու ուլունքագործության, բատիկի, խոհարարության ու ձևավորման, ինչպես նաև այլ երկշաբաթյա գործնական դասընթացների: Կարծում եմ, որ այդ դասընթացների շնորհիվ երեխաները կկարողանան արդեն միջին դպրոցական տարիքում կողմնորոշվել իրենց մասնագիտական նախասիրություններում: Բացի այդ, դասընթացները կօգնեն հաշմանդամ և սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին ձեռք բերել որոշակի գիտելիքներ ու հմտություններ և դրանք հետագայում օգտագործել իրենց ընտանիքների համար տնտեսական հնարավորություններ ու եկամուտ ստեղծելու նպատակով:

Մաղթում եմ հաջողություններ հետագա նախաձեռնություններում:

**Գեորգի Հախնազարյան**  
